№ 12 (96) ԴԵԿՏԵՄԲԵՐ/2016

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԱՆԱԼԻՏԻԿՈՆ

հանդես՝ մտածող եւ ոչ անտարբեր մարդկանց համար



2016-ի դասերը

2016-ի դասերը. ապրիլյան պատերազմից առաջ եւ հետո



Մասիս ՄԱՅԻԼՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան
Ստեփանակերտ

Ապրիլյան պատերազմը դարձավ ոչ միայն 2016 թվականի, այլև հրադադարի բոլոր նախորդ 22 տարիների ամենադրամատիկ իրադարձությունը. այն վճռորոշ դեր ունեցավ միջազգային միջնորդների և ԼՂՀ ու Ադրբեջանի միջպետական հակամարտության կողմերի հետագա գործողություններում: Վերլուծելով 2014-2015թթ. իրադարձությունների զարգացումները՝ մենք նշել էինք, որ խաղաղ կարգավորման կողմնակիցները պետք է անեն ամեն հնարավոր բան, որպեսզի հրադադարի ռեժիմի, հատկապես՝ հրետանու կիրառմամբ խախտումները, կանոնավոր չդառնան: «Եթե ադրբեջանական կողմի սույն ադաղակող գործողությունները ժամանակին չկանխվեն, ապա պատերազմի վերսկսման հավանականությունը կմեծանա»:[1] Հակամարտության ընդարձակման վտանգի մասին զգուշացնում էին տարածաշրջանի խնդիրներին գիտակ շատ փորձագետներ՝ ներառյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքը»:[2]

Հրադադարի կոպիտ խախտումներից մինչև պատերազմ

2016թ. հունվար-մարտ ամիսներին ադրբեջանական կողմը շարունակում էր կոպտորեն խախտել հրադադարի ռեժիմը՝ հրազենի, ռմնականետների, ականանետների և հաուբիցների կիրառմամբ: Ադրբեջանցի զինվորականները չէին դադարեցնում ԼՂՀ տարածք դիվերսիոն ներթափանցումներ կատարելու փորձերը: ԼՂՀ Պաշտպանության բանակի առաջապահ ստորաբաժանումները հաջողությամբ կասեցնում էին այդ փորձերն, ու հակառակորդը, կորուստներ կրելով, նահանջում էր:[3]

---

1 М.Маилян, «Нагорно-карабахское урегулирование в 2015-ом году», http://theanalyticon.com/?p=7275&lang=ru

2 «Есть все основания опасаться, что этот конфликт может расшириться», http://www.vedomosti.ru/politics/characters/2015/07/14/600514-est-vse-osnovaniya-opasatsya-chto-etot-konflikt-mozhet-rasshiritsya

3 ВС НКР пресекли очередную диверсию со стороны Азербайджана, https://news.am/rus/news/315738.html

ԼՂՀ ՊԲ մամլո ծառայության տեղեկատվությամբ՝ մարտի 11-ի գիշերը հակառակորդը հրետակոծել է ոչ միայն Ակնայի (Աղդամ) ուղղությամբ տեղակայված ԼՂՀ ՊԲ դիրքերը, այլև շփման գծից բավականին հեռու գտնվող տարածքներ: ԼՂՀ ՊԲ մամլո ծառայությունը հայտարարել է հրադադարի կնքման պահից ի վեր հակառակորդի գործողությունների աննախադեպ լինելու վերաբերյալ և նշել, որ ադրբեջանական կողմը որդեգրել է հակամարտության գոտում իրավիճակի ապակայունացմանն ուղղված՝ անկանխատեսելի հետևանքներով հղի մարտավարություն:[4] Նշյալ ժամանակահատվածում ԼՂՀ ՊԲ մարտական կորուստների թիվը կազմել է երեք զինծառայող: Եվս մեկ հայ զինծառայող զոհվել է Տավուշի մարզում՝ հայ-ադրբեջանական սահմանին:[5]

Ընդհանուր ընկալմամբ՝ ԼՂՀ և Ադրբեջանի սահմանին 2016թ. ապրիլին տեղի ունեցած ռազմական գործողություններն իրենց ծավալներով ու ինտենսիվությամբ աննախադեպ էին՝ 1994թ. մայիսի 12-ին ղարաբաղյան հակամարտության գոտում կրակի դադարեցման եռակողմ և անժամկետ Համաձայնագրի ստորագրումից ի վեր:[6] Այս փաստաթուղթը, ինչպես նաև 1994-1995թթ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների ստորագրած այլ համաձայնագրեր ենթադրում էին անժամկետ հրադադարի վերափոխումն ամուր խաղաղության: Սակայն տարածաշրջանում և բանակցային գործընթացում ի հայտ եկած հետագա զարգացումները հեռացրել էին խաղաղ հեռանկարը:

Հրադադարի 22 տարիներն ուղեկցվում էին սովորաբար ադրբեջանական կողմի հրահրած այլևայլ խախտումներով: Տարիների ընթացքում փոխվում էին հրադադարի ռեժիմի խախտումների ձևերը. 2014թ. «դիպուկահարային պատերազմը» վերաճել է «դիվերսիոն պատերազմի», իսկ 2015թ. վերջին ամիսներին ադրբեջանական կողմը ղարաբաղյան պաշտպանական դիրքերը և Հայաստանի Հանրապետության բնակավայրերը հրետակոծելու համար ակտիվորեն օգտագործում էր խոշոր տրամաչափի սպառազինություն՝ ականանետներ, հրթիռահրետանային կայանքներ, հակաօդային հրետանի, հաուբիցներ և տանկեր:

Ռազմաճակատում իրադարձությունների զարգացման այդպիսի դինամիկան և Ադրբեջանի գործողությունների նկատմամբ պատշաճ միջազգային արձագանքի բացակայությունը պետք է հանգեցնեին պատերազմի, որն էլ տեղի է ունեցել 2016թ. ապրիլին:[7]

ԼՂՀ ՊԲ-ի (հայաստանցի կամավորների մասնակցությամբ) ձեռնարկած արդյունավետ գործողությունները, համաշխարհային ուժային կենտրոնների՝ հակամարտող կողմերի վրա ցուցաբերած աննախադեպ ճնշումը[8], այդ թվում և

---

[4] Азербайджан предпринял очередную попытку диверсии, https://news.am/rus/news/316178.html

[5] Շփման գծում հակառակորդի կրակոցից զինվոր է զոհվել. Արտյոմ Արսենի Վարդերեսյան, http://www.aniarc.am/2016/03/17/new-victim-in-karabakh-17-march/

[6] Соглашение было подписано руководителями военных ведомств НКР, Азербайджана и Республики Армения. Полный текст документа доступен по ссылке: http://www.vn.kazimirov.ru/doc10.htm

[7] М.Маилян, Нагорно-карабахское урегулирование в 2015-ом году, http://theanalyticon.com/?p=7275&lang=ru

[8] Генсек ООН призывает немедленно прекратить столкновения в Карабахе, http://newsarmenia.am/news/nagorno_karabakh/gensek-oon-prizyvaet-nemedlenno-prekratit-stolknoveniya-v-karabakhe/

Совет Европы призывает стороны карабахского конфликта остановить ненужное кровопролитие – генсек, http://newsarmenia.am/news/nagorno_karabakh/sovet-evropy-prizyvaet-storony-karabakhskogo-konflikta-ostanovit-nenuzhnoe-krovoprolitie-gensek/

իրավիճակի կայունացման օգտին Ռուսաստանի քաղաքական ու զինվորական ղեկավարության ակտիվ ներգրավումը հարկադրեցին ադրբեջանական կողմին դադարեցնել սկսված պատերազմը:[9] ԵԱՀԿ ՄԽ համանախագահներից միայն Ռուսաստանը մեր տարածաշրջանում ունի օպերատիվ հնարավորություններ և համապատասխան գործիքակազմ: Հակամարտության սրացման ժամանակահատվածներում իրավիճակի խաղաղեցման հիմնական դերը սովորաբար վերապահվում է Ռուսաստանին:[10] Այսպիսով, Ադրբեջանի հրահրած ապրիլյան պատերազմն ի սկզբանե ծրագրավորված չէր որպես տևողությամբ ու ծավալներով սահմանափակ ռազմագործողություն:

Մտահոգվելով ԼՂՀ Պաշտպանության բանակի սպասված հակահարձակումից՝ Ադրբեջանն արդեն ապրիլի 3-ին հայտարարեց կրակի միակողմանի դադարեցման մասին, թեև շարունակում էր վարել պատերազմ:[11]

Պատերազմը ներառել է ադրբեջանա-ղարաբաղյան ճակատի ողջ գիծը: Ամենաթեժ մարտերն ընթացել են ԼՂՀ հյուսիս-արևելքում և հարավ-արևելքում: Կենտրոնական ուղղությամբ Ադրբեջանի ծրագրավորած գործողությունները հմտորեն կասեցվել են ղարաբաղյան հրետանու միջոցով: Պատերազմի առաջին օրն ադրբեջանական կողմը գործի է դրել ռազմաճակատի ողջ երկայնքով տեղակայված հատուկ նշանակության ստորաբաժանումներն բրիգադները: Հետագա օրերին ռազմական գործողությունների գոտի են փոխադրվել հավելյալ ռազմական ուժեր: ԼՂՀ Պաշտպանության բանակը հիմնականում հաջողությամբ է կատարել հակառակորդի առաջխաղացման զսպման առաջադրանքը, որի շնորհիվ չի ծագել ԼՂՀ անվտանգության երաշխավոր երկրի՝ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերն Արցախ փոխադրելու անհրաժեշտություն:[12]. Ռազմագործողությունների շարունակությունն, օպերատիվ-մարտավարական հրթիռային կայանքների կիրառմամբ, անտարակույս, կընդլայներ ՌԳԹ-ն (ռազմական գործողությունների թատերաբեմը) և կարող էր պատերազմի մեջ ներքաշել տարածաշրջանային դերակատարների:

Ադրբեջանական կողմն անցած պատերազմում կիրառել է իր ունեցած սպառազինությունների համարյա ողջ տեսականին և անձնակազմի ու ռազմական տեխնիկայի մեծ կորուստներ կրել՝ ներառյալ տանկեր, ուղղաթիռներ և անօդաչու

Председательствующий в ОБСЕ глава МИД ФРГ призвал прекратить бои в зоне карабахского конфликта, http://newsarmenia.am/news/nagorno_karabakh/predsedatelstvuyushchiy-v-obse-glava-mid-frg-prizval-prekratit-boi-v-zone-karabakhskogo-konflikta/«Ապր ի լ և ան պատե ր ազ մ ի ց ս ե ր ած մ ի ք ան ի դ աս ե ր ի մ աս ի ն »:

Могерини призвала соблюдать режим перемирия в Карабахе, http://newsarmenia.am/news/nagorno_karabakh/mogerini-prizvala-soblyudat-rezhim-peremiriya-v-karabakhe/

Посредники решительно осудили применение силы в Нагорном Карабахе – заявление, http://newsarmenia.am/news/nagorno_karabakh/posredniki-reshitelno-osudili-primenenie-sily-v-nagornom-karabakhe/

9 Стороны конфликта в Нагорном Карабахе заявили о перемирии, http://www.bbc.com/russian/news/2016/04/160405_karabakh_ceasefire

Начальники генштабов ВС Армении и Азербайджана встречались в Москве, https://ria.ru/world/20160406/1403385552.html

4 апреля Пресс-служба Южного военного округа ВС РФ распространила сообщение о начале учений в приграничном с Азербайджаном Дагестане - В Дагестане началось учение с подразделениями отдельной мотострелковой бригады ЮВО, http://function.mil.ru/news_page/country/more.htm?id=12082211@egNews

10 Россия не желает ограничиваться только военными вопросами: МасисМаилян, http://ru.1in.am/1162346.html

11 Азербайджан заявил о приостановке боев, Карабах готов обсуждать перемирие, http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/3173141

12 ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական հայեցակարգի համաձայն Հայաստանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության երաշխավորն է ,http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinerus.pdf, http://www.mil.am/media/2015/07/826.pdf

թռչող սարքեր:[13] ԼՂՀ-ն նույնպես կորուստներ է կրել, այդ թվում՝ տարածքային: Օգտագործելով հանկարծակիության գործոնը՝ ադրբեջանական ստորաբաժանումներն ապրիլի 2-ին հարավային և հյուսիս-արևելյան ուղղություններով զբաղեցրել են ԼՂՀ ՊԲ որոշ առաջապահ դիրքեր: Հաջորդ երկու օրերի ընթացքում ԼՂՀ զինված ուժերին հաջողվել է հակահարձակողական գործողություն իրականացնել և հակառակորդին դուրս մղել կորցրած դիրքերի մի մասից:[14] Նախաապրիլյան շփման գծի վերականգնմանն ուղղված ԼՂՀ ՊԲ գործողությունը կանգնեցվել է Մոսկվայում հրադադարի վերաբերյալ համաձայնությունների ձեռքբերմամբ:

Ադրբեջանական կողմն առաջին անգամ կիրառել է Ռուսաստանից և Իսրայելից ձեռք բերված սպառազինությունների նոր տեսակներ՝ ԾԿԿ-1 (ծանր կրականետային կայանք) «Սոլնցեպեկ», ՀԿՀԿ (Համազարկային կրակի հրթիռային կայանք) «Սմերչ», «Սպայկ» հակատանկային կայանքներ և հարվածային անօդաչու սարքեր:

Ամռանն ու աշնան սկզբին առաջնագծում տիրող իրավիճակը համեմատաբար հանգիստ էր: Ադրբեջանական կողմը հիմնականում հրազեն էր օգտագործում: Ադրբեջանական իշխանությունները որոշել են թույլ չտալ հրադադարի կոպիտ խախտումներ, որպեսզի վերանար հետապրիլյան գագաթնաժողովներում համաձայնեցված հրադադարի ռեժիմի և սահմանային միջադեպերի հետաքննության միջազգային վերահսկողության մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը՝ «Չկան խախտումներ՝ չկա վերահսկողության ու հետաքննությունների անհրաժեշտություն» սկզբունքով: Ադրբեջանը հայտնվել է երկընտրանքի առջև՝ կա՛մ շարունակել լարել իրավիճակը և արտաքին ճնշման ներքո ստանալ ՀՀ և ԼՂՀ հետ սահմաններին միջազգային վերահսկողության մեխանիզմներ, զրկվելով հայկական կողմերի վրա ճնշման լծակից, կա՛մ ի կատար ածել հրադադարի պահպանման և վեճերի խաղաղ կարգավորման վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունները՝ դրանով իսկ սառեցնելով հակամարտությունն ու ամրապնդելով ստատուս-քվոն:[15]

Հոկտեմբերի վերջերից Ադրբեջանը շարունակում էր խախտել հրադադարի ռեժիմն՝ արդեն ականանետների ու նռնականետների օգտագործմամբ: Նոյեմբերի 12-18-ին ադրբեջանական կողմն անցկացրել է լայնածավալ զորավարժություններ: Հայտարարվել է, որ դրանց մասնակցել է մինչև 60 հազար զինծառայող, ավելի քան 50 միավոր օդանավ և ուղղաթիռ, 150-ից ավելի միավոր տանկ և զրահամեքենա, ինչպես նաև մինչև 700 հրթիռային կայանք:[16]

---

[13] Министр обороны Карабаха: вероятность возобновления боевых действий высока, https://regnum.ru/news/polit/2171498.html
МО НК: Документы сбитого вертолета свидетельствуют о том, что агрессия Азербайджана была заранее спланирована, http://rus.azatutyun.am/a/27692835.html

[14] 2016թ. օգոստոսի 13-14-ին սույն PolicyPaper-ի հեղինակը Հայաստանի հասարակական և քաղաքական գործիչների խմբի կազմում այցելել է ԼՂՀ ՊԲ առաջապահ դիրքերը՝ հարավում Արաքս գետից մինչև ԼՂՀ հյուսիս-արևելքում գտնվող Թալիշ գյուղը: Մանրամասները՝ հայերեն.«Արաքսից Թալիշ. նոր առաջնագիծ». Նիկոլ Փաշինյանի հոդվածը,http://armtimes.com/hy/read/91781, «Ապրիլեան պատերազմից սերած մի քանի դասերի մասին», http://www.aztagdaily.com/archives/311264

[15] Масис Маилян: Степанакерт даст согласие на ввод “голубых касок” исключительно из стран, признавших к тому времени независимость НКР, http://www.arminfo.info/full_news.php?id=22663&lang=2#sthash.tVUbKa9X.dpuf

[16] Учения с участием 60 тысяч военных начались в Азербайджане, http://www.kavkaz-uzel.eu/articles/292522/

Հայաստանի ԱԳՆ-ում այս զորավարժություններն անվանել են «հերթական սադրիչ դրսևորում», որում ներգրավվել են զինված ուժերի համարյա ողջ կազմն ու ռազմական տեխնիկան, ինչն ինքնին սպառազինությունների վերահսկողության վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների կոպտագույն խախտում է:[17]

Զորավարժությունների նախօրեին՝ նոյեմբերի 10-ի լույս 11-ի գիշերը Ադրբեջանի զինված ուժերը 60մմ և 82մմ ականանետների կիրառմամբ հրետակոծել են ԼՂՀ ՊԲ առաջապահ դիրքերը Թալիշ և Ցարմջա գյուղերի շրջանում: ԼՂՀ ԱԳՆ հայտարարության մեջ նշվել է, որ Լեռնային Ղարաբաղի դեմ ապրիլյան ագրեսիայից հետո առաջին անգամ տեղի ունեցող ականանետների զանգվածային կիրառումը՝ վերջին շրջանում շփման գծում լարվածության թեժացմանը միտված Ադրբեջանի նախաձեռնած գործողությունների շարունակությունն է:[18]

Որոշ եզրակացություններ և առաջարկություններ

- Ապրիլյան պատերազմն Ադրբեջանի կողմից ի սկզբանե չի ծրագրվել որպես տևողությամբ և ծավալներով սահմանափակ ռազմագործողություն,
- Ապրիլյան պատերազմը հարվածի տակ է դրել բանակցային գործընթացն ու հետ է մղել հակամարտության խաղաղ կարգավորման հեռանկարը,
- Ապրիլյան իրադարձությունները հաստատել են, որ ադրբեջանական կողմը բանակցություններում անպայմանագրունակ գործընկեր է,
- Ադրբեջանական դիվանագիտությունը կասկածի տակ է դրել կրակի դադարեցման վերաբերյալ 1994-1995 թվականների եռակողմ ու անժամկետ համաձայնությունները: Միջազգային միջնորդները պետք է հրատապ վերականգնեն հրադադարի իրավական հենքը, առանց որի կարգավորման քաղաքական հարցերի քննարկումը լիովին իմաստազրկվում է,
- Միջազգային աջակցությամբ ուժերի հավասարակշռության վերականգնումը՝ ներառյալ 1994թ. հրադադարի գիծը *(statusquopostbellum)* կարող է զսպման արդյունավետ միջոց լինել ռազմական գործողությունների վերսկսումը չթույլատրելու համար,
- Ապրիլյան պատերազմի հանդեպ միջազգային հանրության արձագանքն աննախադեպ էր: Որոշ երկրների և միջազգային կառույցների հայտարարություններում ընդգծվում էր ռազմագործողությունների անհապաղ դադարեցման անհրաժեշտությունը: Միայն ԵԱՀԿ ՄԽ միջնորդական խմբի անդամ Թուրքիան, մեկ էլ Պակիստանն են ողջունել ադրբեջանական ագրեսիան,
- Միջազգային ուժի կենտրոններն արտահայտել են համատեղ դիրքորոշում և շահագրգռվածություն՝ տարածաշրջանում խաղաղությունը պահպանելու հարցում,
- Ապրիլյան պատերազմը ծայրահեղականացրել է հանրային տրամադրությունները ԼՂՀ-ում, ՀՀ-ում և Ադրբեջանում: Հնարավոր զիջումների և փոխզիջումների թեման բացարձակապես ժողովրդականություն չի վայելում,
- Միջազգային հանրության ջանքերը պետք է կենտրոնացվեն իրավիճակի կայունացման և պատերազմի կանխման ուղղությամբ՝ հրադադարի ռեժիմի

[17] Армения назвала провокацией запланированные в Азербайджане учения, http://www.kavkaz-uzel.eu/articles/292097/
[18] Заявление МИД НКР, http://nkr.am/ru/news/2016-11-11/886/

միջազգային շուրջօրյա վերահսկողության (ԵԱՀԿ քաղաքացիական դիտորդներ) և սահմանային միջադեպերի հետաքննության մեխանիզմների ստեղծմամբ,

- Հրադադարի ռեժիմի միջազգային մշտական վերահսկողության մեխանիզմի մշակման և ներդրման դեմ Ադրբեջանի հարուցած փաստացի խոչընդոտները վկայում են, որ Բաքվում մտադիր են հետայսու ևս անպատիժ կերպով շարունակել ապրիլյան պատերազմին հանգեցրած ռազմական դիվանագիտությունը,

- Ապրիլին փոփոխված հանգամանքները պետք է արմատապես վերափոխեն բանակցային գործընթացի տրամաբանությունը: Ակնհայտ է, որ նախորդ կաղապարով բանակցությունների շարունակությունը թերարժեք է տարածաշրջանում խաղաղությունը պահպանելու համար,

- ԼՂՀ անկախության միջազգային ճանաչումը կարող է դառնալ Ադրբեջանի զսպման և Հարավային Կովկասում կայունության ապահովման հավելյալ քաղաքական-դիվանագիտական միջոց,

- Ապրիլյան պատերազմը ԼՂՀ և ՀՀ քաղաքացիների և արտերկրի հայկական սփյուռքի ներկայացուցիչների համակողմանի ջանքերով խթանել է ԼՂՀ Պաշտպանության բանակի և Արցախի անվտանգության համակարգի ակտիվ արդիականացումը,

- Քաղաքացիական խաղաղարարության ներուժը թույլ էր: Ծագել է ԼՂՀ-ում, ՀՀ-ում և Ադրբեջանում միջազգային դրամաշնորհային ու խաղաղարար կազմակերպությունների աշխատանքի ռազմավարությունների վերանայման անհրաժեշտություն,

- Ի հեճուկս Ղարաբաղի շուրջ միջազգային հանդիպումների և քննարկումների հետապրիլյան հաճախակիացման՝ կարգավորումը մնում է դժվարահաս խնդիր, թեև երկու հարևան ժողովուրդների խաղաղ համակեցության հնարավորությունը դեռևս սպառված չէ:

Հոդվածի ամբողջական՝ ռուսերեն տարբերակը կարող եք կարդալ մեր հանդեսի [կայքէջում](#)

2016-ի դասերը



Հայկ ԿՈՆՋՈՐՅԱՆ
Հրապարակախոս
Երևան

Պատմությունը ժամանակների վկայությունն է, ճշմարտության լույսը, հիշողության կյանքը, կյանքի ուսուցիչը, անցյալի սուրհանդակը:

Historia vero testis temporum,
luxveritatis, vita memoriae, magistra vitae, nuntiavetustatis.

Կիկերոն

«Պատմության գլխավոր դասն այն է, որ նրանից ոչ ոք դաս չի քաղում», սիրում էր կրկնել հայտնի ասույթը համալսարանի դասախոսներիցս մեկը: Եթե սա մեկտեղենք Կիկերոնի խոսքերի հետ, կստացվի՝ պատմությունը լավ ուսուցիչ է, մենք ենք ծույլ աշակերտներ: Բայց ինչպես ցանկացած գիտելիք, այնպես էլ պատմության դասը տարբեր մարդիկ կարող են կիրառել տարակերպ, կամ նույն ճշմարտությունից կատարել տարբերվող հետևություններ: Երբ Ադոլֆ Հիտլերն ասում էր՝ ով է այժմ հիշում հայերի ջարդերը, սա նշանակում էր, որ նա չի՞ սովորել պատմության այն դասը, որն ասում է՝ չի կարելի բնաջնջել մեկ այլ ժողովրդի, թե՞ ընդհակառակը՝ սովորել էր մյուս դասը, որ կարելի է բնաջնջել և մնալ անպատիժ: Ուրեմն՝ պատմության դասը պարտադիր չէ, որ լինի բարոյախրատական և ոչ էլ օգտակար՝ հանուն հասարակական բարեկեցության: Հակառակը, կարող է բերել նոր արհավիրքների, եթե, օրինակ, իշխանությունն ու հանրությունը նույն դասից կատարեն տարբեր հետևություններ՝ ամենքինը միտված սեփական շահերի սպասարկմանը: Մեծագույն դժբախտություն է, երբ իշխանության և հանրության շահերը տարբեր են, իսկ երբեմն՝ հակադիր:

2016 թվականը Հայաստանում նշանավորվեց վստահության ճգնաժամի պիկով, որի երկու գագաթներն էին ապրիլյան պատերազմը և հուլիսին ՊՊԾ գնդի գրավումը: Այս իրադարձությունները հասարակական գիտակցության մեջ ակտիվացրին համատարած անարդարության, անարդյունավետ կառավարման, սոցիալական բևեռվածության, իշխանության և ժողովրդի ծայրահեղ օտարվածության

գաղափարները: Կային իշխանության կողմից խնամքով կառուցված «ճշմարտություններ», որոնք փլուզվեցին:

Մեծագույն հուսալքությունը կապված էր բանակի հետ: Հայտնի է, որ բանակը Հայաստանի ամենակայացած ինստիտուտներից մեկն է, որը վայելում է հասարակական վստահություն և հոգածություն: Ինչ-որ իմաստով, բանակը սակրալ կառույց է, որին չի կարելի դիպչել, քննադատել: Այս իռացիոնալ վերաբերմունքը մեծապես պայմանավորված է մեր հասարակության վախերով: Մենք վախենում ենք վտանգից, բայց վախը բերում է նոր վտանգների: Վախի այս չափաբաժինն էլ հեշտացնում է հասարակական գիտակցության մանիպուլյացիան, որը Հայաստանի իշխանությունները տասնամյակներ շարունակ կատարել են՝ կամա, թե ակամա: Մարդկանց շարունակ մատուցվել էր այն միտքը, որ գուցե մենք ունենք թույլ սոցիալական ծառայություններ, կաղում ենք առողջապահության ոլորտում, չունենք արդար դատարաններ և ունենք բարձր գործազրկության մակարդակ, բայց կառուցել ենք տարածաշրջանի ամենամարտունակ և հզոր բանակը: Մենք ձեզ քիչ ենք փող տալիս, որ զենք գնենք: Ասել է թե՝ մեր իշխանության ներքո դուք բարեկեցիկ չեք, բայց անվտանգ եք:

Այս միտքը ցեղասպանություն վերապրած և վերջին 20-ամյակում պատերազմ տեսած ժողովրդի համար կարող է երկաթյա ճշմարտություն թվալ: Նույնիսկ այս գաղափարի ներքո Հայաստանը բռնակցվեց ԵՏՄ-ին: Հանուն անվտանգության մենք զոհեցինք մեր բարեկեցությունը: Կարծես նախապես սահմանված հիմնարար ճշմարտություն կա, որ այդ երկուսը չեն կարող լինել միաժամանակ, և մեկին պետք է հասնել՝ պարտադիր մյուսը զոհաբերելով: Ազատությունն ու բարեկեցությունը հակադրելով անվտանգությանը՝ իշխանությունները մշտապես վերահսկում են հասարակության ձգտումներն ու ցանկությունները՝ նրան դարձնելով առավել կառավարելի: Ազատ ու բարեկեցիկ մարդը փամփուշտ է՝ կրակված ավտորիտար ռեժիմի ճակատին:

Բայց ապրիլյան պատերազմը կոտրեց կարծրատիպը և քողազերծեց բանակում առկա այն խնդիրները, որոնք խնամքով թաքցվել էին տարիներ շարունակ: Հայկական բանակի նկատմամբ հակառակորդի տեխնոլոգիական գերազանցությունը, 80-ականների զենքերով կռվելու մասին Սերժ Սարգսյանի հայտարարությունը, հայկական հետախուզության թույլ տված բացթողումները, բազմաթիվ զոհերն ու վերջապես 800 հեկտար հողերի կորուստը հանրության մոտ փոխեցին բանակի նկատմամբ եղած նախկին անվերապահ վստահությունը և խորացրին վստահության ճգնաժամը իշխանությունների նկատմամբ: «Դուք աղքատ եք, բայց անվտանգ» առասպելը փլուզվեց: Չնայած որ բանակը նախկինի պես շարունակում է վայելել քաղաքացիների հոգածությունը, բանակի կառավարման օղակների հանդեպ անվստահությունն այսօր գտնվում է չափազանց բարձր մակարդակի վրա:

2016 թվականի հուլիսի 17-ին «Սասնա ծռեր» խումբը գրավեց Երևանի ՊՊԾ գունդը և հայտարարեց զինված ապստամբություն սկսելու մասին: Խմբի հիմնական պահանջներից էին Սերժ Սարգսյանի հրաժարականը և Արցախի ամբողջականության պահպանումը՝ բացառելով հողերի հանձնման որևէ

հնարավորություն: «Եկել է ազատության, արժանապատվության, արդարության և իրավունքի ժամանակը», ասվում էր խմբի տարածած հայտարարության մեջ: ՊՊԾ գունդը գրավված մնաց 14 օր, զոհվեց երկու ոստիկան, կողմերը տվեցին վիրավորներ, Սարի Թաղում և Խորենացի փողոցում ընթացող ցույցերի ժամանակ ոստիկանությունը կիրառեց աննախադեպ բռնություններ, որոնց արդյունքում վիրավորվեցին բազմաթիվ քաղաքացիներ, լրագրողներ:

Հուլիսյան դեպքերը սոսկ օրվա բռնկված պոռթկումներ չէին և պայմանավորված չէին միայն մեկ հանգամանքով: Դրանք տարիներ շարունակ կուտակված անվստահության, սոցիալական անարդարության և բևեռվածության դրսևորումներն էին: Բազմաթիվ սովորած կամ չսովորած դասերի արդյունքներն էին, որոնք իրենց հերթին տվեցին նորանոր դասեր:

Վերադառնալով սկզբին

Պատմության դասերը պարտադիր չէ, որ բերեն առաջընթացի և զարգացման: Ընդհակառակը՝ կարող են խորացնել ճգնաժամն ու հանգեցնել լճացման: Եկեք պատկերացնենք երկու տարբեր իրականություններ. առաջինում իշխանությունները 2016-ի դասերից կատարել են սխալ հետևանքներ, երկրորդում՝ ճիշտ հետևանքներ: Նույն դասը՝ տարբեր արդյունքներով:

Իրականություն N 1

Դաս I Ապրիլյան դեպքերն ի ցույց դրեցին բանակի բազմաթիվ խնդիրներ, որոնք հետևանքն էին մեր (իշխանության) գործողությունների՝ կոռուպցիա, անարդյունավետ կառավարում, պետական միջոցների մսխում և այլն: Չնայած այս հանգամանքին, պատերազմի օրերին հասարակությունը աննախադեպ կերպով համախմբվեց բանակի շուրջը՝ սեփական ուժերով և միջոցներով աջակցելով բանակին, հաճախ կատարելով այն, ինչ պետք է անեինք մենք: Հասարակությունն ավելի կազմակերպված էր, քան պետությունը. դա լավ է: Ուստի, հարկավոր է շարունակել նույն կերպ, սակայն մշակել առավել հմուտ և խորամանկ ռազմավարություն, որպեսզի հասարակությունը չհայտնաբերի մեր բացթողումները և շարունակի նույն հոգածությունը ցուցաբերել բանակին՝ փոխհատուցելով մեր բացթողումները:

Իրականություն N 2

Դաս I Ապրիլյան դեպքերը ի ցույց դրեցին բանակի բազմաթիվ խնդիրներ, որոնք հետևանքն էին մեր (իշխանության) գործողությունների՝ կոռուպցիա, անարդյունավետ կառավարում, պետական միջոցների մսխում և այլն: Չնայած այս հանգամանքին, պատերազմի օրերին հասարակությունը աննախադեպ կերպով համախմբվեց բանակի շուրջը՝ սեփական ուժերով և միջոցներով աջակցելով

բանակին, հաճախ կատարելով այն, ինչ պետք է անեինք մենք: Հասարակությունն ավելի կազմակերպված էր, քան պետությունը. դա վատ է: Ուստի, հարկավոր է վերջ տալ այս քաղաքականությանը, մշակել առավել հեռահար և պետականամետ ռազմավարություն, որպեսզի հասարակությունը վերջնականապես չհիասթափվի բանակից և շարունակի նույն հոզածությունը ցուցաբերել վերջինիս նկատմամբ՝ լրացնելով մեր ջանքերը:

Իրականություն N 1

Դաս II Հուլիսին ՊՊԾ գնդի գրավումը լրջագույն մարտահրավեր էր մեր իշխանության համար: Մենք պետք է գիտակցենք, որ եթե կեղծում ենք ընտրությունները, խորացնում ենք աղքատությունը, մեծացնում ենք անարդարությունը, ուրեմն հարկավոր է միաժամանակ ամրապնդել հասարակությանը վերահսկելու մեխանիզմները, որպեսզի կանխարգելենք նման հետևանքները: Հարկավոր է սահմանափակել մամուլի և խոսքի ազատությունը, որպեսզի մեր իշխանության համար վտանգավոր գաղափարները դադարեն շրջանառվել: Հարկավոր է կատարել իմիտացիոն բարեփոխումներ, մի քանի պաշտոնյաների ժամանակավորապես հեռացնել աշխատանքից, ստեղծել փոփոխությունների պատրանք՝ հասարակության մոտ առաջացնելով դրական սպասումներ ընտրություններին ընդառաջ: Ընտրակեղծիքները պետք է դարձնել առավելս խորամանկ՝ բացառելու համար քաղաքացիների իրական կամաարտահայտությունը: Մեր իշխանությունը թանկ է ամեն ինչից:

Իրականություն N 2

Դաս II Հուլիսին ՊՊԾ գնդի գրավումը լրջագույն մարտահրավեր էր մեր պետության համար: Մենք պիտի գիտակցենք, որ եթե կեղծում ենք ընտրությունները, խորացնում ենք աղքատությունը, մեծացնում ենք անարդարությունը, հնարավոր չէ երկարժամանակ վերահսկել կուտակվող հասարակական ըժգոհությունները, որոնք ի վերջո հանգեցնում են նման հետևանքների: Հարկավոր է ապահովել մամուլի և խոսքի ազատությունը, որպեսզի մեր պետության համար օգտակար գաղափարները ակտիվորեն շրջանառվեն և զարգանան: Հարկավոր է վերջ տալ իմիտացիոն բարեփոխումներին, մեղավոր պաշտոնյաներին հեռացնել աշխատանքից և ենթարկել պատասխանատվության, կատարել իրական փոփոխություններ՝ հասարակության մոտ առաջացնելով դրական սպասումներ ընտրությունների հանդեպ: Ընտրությունները պետք է դարձնել առավելս արդար՝ ապահովելու համար քաղաքացիների իրական կամաարտահայտությունը: Մեր պետությունը թանկ է ամեն ինչից:

Իրականություն N 1

Դաս III...

Ադրբեջանը 2016 թվականին. էկոնոմիկան՝ փորձության առաջ



Ավազ ՀԱՍԱՆՈՎ
Հումանիտար հետազոտությունների ընկերության տնօրեն
Բաքու

Այն, որ միլիարդավոր դոլարների եկամուտներ ստացող Ադրբեջանը կհանդիպի այնպիսի տնտեսական դժվարությունների, որոնց առաջ հայտնվեց 2016-ին, շատերի համար ճակատագրի անսպասելի շրջադարձ էր: Մարդիկ արդեն հարմարվել էին կայուն կյանքի, նրանց եկամուտները սոցիալական նոր պայմաններում ապրելու համար այնքան էլ փոքր չէին, նրանք հարմարվել էին կյանքին՝ իր նոր դրսևորումներով: Բիզնես-պլանների հարցում ևս ամեն ինչ կարգին էր, եկամուտների նկատմամբ պետական ուժեղացված հսկողություն չկար: Անգամ շարքային գործարարները, որոնք իրենց փոքր բիզնեսն ունեին, կարող էին ինքնուրույն իրենց կյանքը դասավորել, իսկ պետությունից նրանց կախվածությունը դրսևորվում էր զուտ փոքրաստիճան պաշտոնյաների կողմից ապօրինի միջամտությունների ձևով: Կառավարությունը ժամանակ առ ժամանակ ծրագրեր և որոշումներ էր ընդունում՝ նվազեցնելու համար պաշտոնյաների հնարավորությունները՝ խանգարելու գործարարներին:

Սակայն 2016 թվականը հողմացրիվ արեց իրենց եկամուտները նոր-նոր կարգավորել սկսած գործարարների և շարքային քաղաքացիների բոլոր պլանները: Նավթի գների անկումը, նավթային եկամուտների նվազումը, դոլարի հանդեպ մանաթի փոխարժեքի կրկնակի նվազումը Ադրբեջանում հանգեցրին ոչ միայն պետության, այլև նրա քաղաքացիների, հատկապես փոքր բիզնեսով զբաղված անձանց տնտեսական զարգացման արգելակմանը:

Հիմա երկրում միակ հույսը մնացել է տնտեսական իրական բարեփոխումներ անցկացնելուն միտված օպերատիվ գործողությունների ակնկալիքը: Բայց դե նավթային եկամուտներից տևական ժամանակ կախյալ վիճակում գտնված տնտեսության ակնթարթային բարեփոխումն անհնար է թվում:

Այս պայմաններում 2016 թվականին նաև քաղաքական բարեփոխումների սկզբի համար բարենպաստ հող ստեղծվեց: Հարկային արտոնությունների կարգավորումից զատ՝ այդօրինակ բարեփոխումների առաջին դրսևորումներից դարձավ յոթ տարով գործարար կառույցների ազատումը հարկային ստուգումներից: Չնայած այն բանին, որ սա կարևոր քայլ

էր, թուլացած գործարար կառույցները սկսեցին մեկը մյուսի ետևից փլուզվել, իսկ փոքր բիզնեսով զբաղվողներն իրենց տեղը սկսեցին զիջել մրցունակ խոշոր ընկերություններին:

Ղարաբաղյան ճակատում ապրիլյան դեպքերից հետո երկրում հայրենասիրական տրամադրությունների աճն իշխանություններին թույլ տվեց երեք ամիս շարունակ շահարկել ազգային զգացմունքները: Ապրիլյան դեպքերի ժամանակ հանրությունը թեև կարճ ժամկետով, բայցևայնպես չտեսնելու տվեց տնտեսական դժվարությունները և երկրի խնդիրները: Ողջ ուշադրությունը սևեռված էր ապրիլյան դեպքերի ընթացքում երկրի ձեռքբերումներին ու կորուստներին:

Թեև Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների վատթարացումը դժվարին կացության մեջ էր դրել Ադրբեջանի իշխանություններին՝ 2016 թվականին գլոբալ քաղաքականություն Իրանի վերադարձը և Ադրբեջան-Ռուսաստան-Իրան ձևաչափով հանդիպումները նոր հնարավորությունների հույս ներշնչեցին: Հիմա արդեն Ադրբեջանը հանդես էր գալիս որպես Ռուսաստանի գործընկեր տարածաշրջանային նոր նախագծում: Հանդես գալով TAP (Trans Adriatic Pipeline) գազային նախագծի մասին նախաձեռնությամբ, որը միտված է դեպի Արևմուտք գազի արտահանման մեծացմանը, Ադրբեջանի ղեկավարությունն իր ստորագրությունը դրեց մի ծրագրի տակ, որը չէր համապատասխանում Ռուսաստանի շահերին և, հետևաբար, դրան զուգահեռ հարկ էր հաղթահարել Ռուսաստանի համառությունը, որպեսզի վերջինս չխոչընդոտի ծրագրի իրականացմանը: Ադրբեջանում բոլորը կարծում էին, որ իշխանությունը համաձայնություն է ձեռք բերել Ռուսաստանի հետ և «ոչ» է ասելու Եվրոպական Միության հետ քաղաքական համագործակցությանը:

Այս ամենին զուգահեռ իշխանությունը շահագրգռված էր քաղաքական գործընթացների վերահսկողությունը պահպանելու մեջ: 2016-ի սեպտեմբերին հանրաքվեի անցկացումը հիմք ստեղծեց նախագահի իշխանության զորեղացման և նրա կողմից որոշակի բարեփոխումների անցկացման լրացուցիչ հնարավորությունների ստեղծման համար, նաև այնպիսի տպավորություն թողեց, որ Արևմուտքի հետ համագործակցությանը վերջ դրվեց, և որ Ադրբեջանը նախապատվությունը տալիս է ԵԱՏՄ-ին:

Սեպտեմբերյան հանրաքվեի անցկացման հարցում իշխանությունները խնդիրներ չունեցան: Հանրությունում քաղաքական կուսակցությունների հնարավորությունները սահմանափակ են, չափազանց ցածր մակարդակի վրա են քաղաքացիական հասարակության գործնեության համար բնականոն պայմանները: Մամուլը և հատկապես էլեկտրոնային լրատվամիջոցները գտնվում են կառավարության կողմից հատկացվող ֆինանսներից կախվածության մեջ: Անկախ հեռուստատեսության և ռադիոյի հնարավորությունները սահմանափակ են: Սահմանափակումներ են դրված արտերկրից ֆինանսավորվող հեռուստառադիոալիքների վրա:

Թեև այս ամենն իշխանություններին չէր խոչընդոտում հավատալ սեփական ուժերին և սկսել հանրության կողմից ակնկալվող բարեփոխումները, այնուամենայնիվ՝ բարեփոխումներ չեղան: Տարեվերջին մոտ հրապարակելով տնտեսության և կառավարման տարբեր ոլորտներին վերաբերող ռազմավարական ճանապարհային քարտեզը՝ նախագահն ընդհանուր գծերով բացահայտեց, թե ինչպիսի բարեփոխումներ են անցկացվելու 2017 թվականին: Սակայն այդպես էլ չհրապարակվեց որևէ հայեցակարգ, որը կարող էր ապացույց հանդիսանալ բարեփոխումներ անցկացնելու մտադրության: Հատկապես այն փաստը, որ հանրաքվեից բխող խնդիրների կատարման համար հիմք հանդիսանալիք առաջարկների

նախապատրաստման համար հատկացվել է վեց ամիս, ապացուցում է, որ բարեփոխումները կախված են լինելու հենց այդ առաջարկներից:

Սակայն սեպտեմբեր ամսին Եվրոպական Միության հետ Ադրբեջանի համագործակցության վերսկսումը և նրա առաջարկած «ռազմավարական համագործակցության» մասին փաստաթուղթը փարատեցին այն բոլոր կասկածները, թե արդյո՞ք Ադրբեջանը կգնա Եվրոպական Միության հետ համագործակցության: Պատահական չէ, որ այդ հարցով բանակցություններ սկսելու համար պահանջվող մանդատը Եվրոպական Հանձնաժողովը ստացավ Եվրամիության երկրների կողմից առանց ուշացման: Նշյալ համաձայնությունը ստացվեց չափազանց կարճ ժամկետում՝ ընդամենը երկու ամսում, ինչից էլ բացահայտ դարձավ, որ շուտով կսկսվի Ադրբեջանի հետ բանակցությունների նոր փուլը:

2016 թվականի առավել հիշարժան իրադարձությունների համապատկերում հենց Եվրամիության հետ հարաբերությունների նորմալացումն է մարդկանց մոտ մեծացրել հույսերը, որ կառավարությունը կրկին առանձնակի նշանակություն կտա Արևմուտքի հետ համագործակցությանը: Թուլացած տնտեսության համապատկերում սա որոշակի հույսեր է արթնացնում մարդկանց մոտ:

2016 թվականը կհիշվի նաև երկրի բանկերի կոլապսով: Երկրում դոլարի պակասը տարեվերջին ուժեղացրեց խուճապը: Մարդիկ լրջորեն մտահոգված են գների աճով: Հարկ է հաշվի առնել, որ հոկտեմբեր ամսից մթերքի գներն աճել են 40 տոկոսով: 2017 թվականին գնաճի շարունակման մասին ենթադրությունները ահով են լցնում չունևոր մարդկանց և թոշակառուների սրտերը: Բոլորն էլ ցանկանում են շուտափույթ հրաժեշտ տալ անցնող տարուն՝ հնարավորինս շուտ ձերբազատվելու համար 2016-ի արհավիրքներից: Սակայն մարդիկ վախենում են նաև նրանից, որ 2017 թվականին նույնպես կարող են որոշակի դժվարություններ լինել: Միգուցե վերջին տասը տարում մարդիկ առաջին անգամ հայտնվեցին լիովին անորոշության մեջ առ այն, թե ինչ անակնկալներ կարող են իրենց սպասել նոր տարում:

Համենայն դեպս, հայ-ադրբեջանական հարաբերությունների նորմալացման նպատակով հանրության ուժերի օգտագործմանն ուղղված ադրբեջանական կառավարության ներկայացուցիչների ջանքերն այն բանի նշանն են, որ գալիք տարում իրավիճակը տարածաշրջանում կայուն է լինելու: Իսկ ադրբեջանական իշխանությունների կողմից 2017 թվականի համար նախատեսված բարեփոխումների համար կայունությունն անհրաժեշտ է:

Հայ-իրանական ռազմական համագործակցության արժակն ու իրողությունները



Անտոն ԵՎՍՏՐԱՏՈՎ
Քաղաքական վերլուծաբան
Վորոնեժ

Իրանի նախագահ Հասան Ռոհանիի սպասվող այցը Հայաստան հաջորդեց տարբեր մակարդակներում կայացած երկու երկրների քաղաքական գործիչների շփումների շարքին: Միջազգային տնտեսական պատժամիջոցների ճնշումից դուրս եկող Իրանը և զարգացման ասպարեզում լուրջ խնդիրների բախվող Հայաստանը սուր կերպով զգում են միմյանց կարիքը: Խոսքն ամենատարբեր՝ տնտեսական (որտեղ վերջին տարվա ընթացքում գրանցվել է ապրանքաշրջանառության 4 տոկոսանոց նվազում), քաղաքական (երկու պետությունները սուր կերպով դաշնակիցների և գործընկերների կարիք են զգում) բնագավառների մասին է: Հանդիպմանն առանձնահատուկ նշանակություն է հաղորդում Լեռնային Ղարաբաղում իրավիճակի վերջերս արձանագրված սրացումը, որը հատկապես կարևոր է Երևանի համար՝ հաշվի առնելով հայ-իրանական շփումների ռազմական չափումը:

Դժվար է ենթադրել, թե տվյալ հարթությունում ինչի է հանգեցնելու Ռոհանիի այցը, թեև, ակնհայտ է, որ կողմերը նախապատրաստվում են լուրջ և հիմնավոր որոշումներ կայացնել: Դեռևս 2006թ. հայ-իրանական հարաբերությունները ռազմավարական են որակվել. այս որակումը հնչել է Հայաստանի այն ժամանակվա պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի կողմից՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության ուղղությունները” վերնագրված զեկույցում: Հայաստանի պաշտպանական գերատեսչության ղեկավարի պաշտոնում նրան հաջորդած անձինք շարունակել են ընթանալ կողմերի միջև ռազմական համագործակցությունն ամրապնդելու ուղիով: 2011թ. ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ռեզա Մոզաֆարի Նիայիի մասնակցությամբ կայացած բանակցություններում քննարկվել են երկու երկրների համար առավել արդիական խնդիրները, մասնավորապես՝ Հայաստանի

Հանրապետության բարդ իրավիճակը, որում նա հայտնվել է այն ժամանակ, երբ Վրաստանը սկսել է խոչընդոտել Ռուսաստանից Հայաստան սպառազինությունների բեռնափոխադրմանը՝ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից շարունակվող շրջափակման պայմաններում: Հենց այդ ժամանակահատվածում է արդիականացել Իրանն ու վերջինիս ռազմական հնարավորություններն օգտագործելու անհրաժեշտության մասին տրամախոսությունը: Երկու երկրների մերձեցումը խթանել են նաև մեկ տարի անց Իրանի Իսլամական Հանրապետության դեմ սահմանված միջազգային պատժամիջոցները, որոնք իսլամական հանրապետության ողջ պատմության ընթացքում ծավալով ու տարողությամբ ամենածանրն էին: Ի հեճուկս այն հանգամանքի, որ Թեհրանի դեմ պատժամիջոցները սահմանվել են ոչ միայն Արևմուտքի առանձին պետությունների, այլև ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից, հայկական կողմը շարունակել է Իրանի հետ խորհրդակցություններն ու քննարկումները, այդ թվում և ռազմական հարցերի շուրջ:

Այնուամենայնիվ, երկար ժամանակ հայ-իրանական ռազմական համագործակցությունը որևէ շոշափելի գծեր չի ունեցել. խոսքն ընդամենը բանակցությունների և մտադրությունների փոխադարձման մասին էր: Եվ այս ամենը՝ քաղաքական բնագավառում գործընկերային բնույթի փոխհարաբերությունների և տնտեսական համագործակցության անբավարար քայլերով զարգացող փոխգործակցության ֆոնին:

Իրանում Հասան Ռոհանիի իշխանության գալը և պատժամիջոցների վերացման հարցում նրա արձանագրած հաջողությունները հայ-իրանական ռազմական համագործակցության համար նոր նախադրյալներ են ստեղծել: 2016թ. մայիսի 24-25-ին Իրանի մայրաքաղաք է այցելել հայկական պատվիրակությունը՝ ՀՀ պաշտպանության փոխնախարար Դավիթ Տոնոյանի ղեկավարությամբ: Նրան հաջողվել է հանդիպումներ անցկացնել Իրանի պաշտպանական գերատեսչության ղեկավար Հոսեյն Դեհղանի և վերջինիս տեղակալ Ֆիրուզ Մասիհպուրի հետ, ինչպես նաև այցելել Իրանի “Մալիք Աշտար” գիտատեխնիկական համալսարան ու ռազմավարական հետազոտությունների կենտրոն: Հենց 2016 թվականի մայիսին էլ, փորձագետների կարծիքով, տեղի է ունեցել երկու երկրների ռազմական փոխգործակցության օրակարգի համաձայնեցումը և ուրվագծվել են հետագա ռազմական համագործակցության առանցքային միջոցառումները: 2016թ. հիշյալ համագործակցության խորացման ուղղությամբ ջանքեր է գործադրել նաև ՀՀ նորանշանակ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, ով հանդիպել է իրանական ԷՏԿԱ ընկերության գործադիր տնօրեն Մեհդի Կարբալայիի հետ: Վերոնշյալ ընկերությունն արտադրում է սննդամթերքի տեսականի, տեքստիլ և այլ կարգի արտադրանք բանակի թիկունքային ապահովման համար, ինչպես նաև իրականացնում է ռազմական նշանակության օբյեկտների շինարարություն:

2016թ. գարնան-ամռան շրջանում Հայաստանի և Իրանի պաշտպանական գերատեսչությունների ներկայացուցիչների հաճախակիացած հանդիպումները պատահականություն չէին: Դրանք բացատրվում են Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարության և հասարակության շրջանում Ռուսաստանի

նկատմամբ առաջացած որոշակի հիասթափությամբ, քանի որ, շատերի կարծիքով, Մոսկվան Ղարաբաղում ապրիլյան ռազմական սրացման ժամանակ բավարար ակտիվությամբ չի պաշտպանել իր միակ հարավկովկասյան ռազմավարական դաշնակցին: Մոսկվայի վարկանիշը Հայաստանում էլ ավելի է նվազել ապրիլյան իրադարձություններին հաջորդած շրջանում ռուսաստանյան մի շարք քաղաքական գործիչների և փորձագետների կողմից հնչած անընդունելի հայտարարությունների հետևանքով, որոնցից ամենացայտունը, թերևս, Դմիտրի Ռոգոզինի՝ Ադրբեջանին սպառազինություններ մատակարարել շարունակելու մասին արված խոստումն էր:

Սույն թվականի հունիսին Իրան է մեկնել ևս մեկ պատվիրակություն՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի և ՀՀ Զինված ուժերի նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ղեկավար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանի ղեկավարությամբ: Սպասվածի համաձայն՝ այս այցելությունը բացի ընդհանուր ուրվագծերից (օրինակ՝ Դեհգանի հետ նոր հանդիպումը) ունեցել է նաև ավելի հստակ դրսևորումներ: Հակոբյանն ու իր ենթականերն այցելել են ԷՏԿԱ գործարանն ու ծանոթացել են տվյալ ընկերության արտադրանքին: Հայաստանի ռազմական ղեկավարությաան և ԷՏԿԱ ընկերության միջև կայացել են նաև այլ ուշագրավ շփումներ: Տվյալ պահին այս ընկերությունը Հայաստանի պաշտպանության նախարարության հետ բացահայտ համագործակցող իրանական միակ արտադրողն է: Համագործակցության բաց բնույթը բացատրվում է այն հանգամանքով, որ ԷՏԿԱ-ն նեղ իմաստով զբաղվում է ոչ թե բուն սպառազինությունների, այլ՝ թիկունքում օգտագործվող ապրանքատեսակների արտադրությամբ: Երկու պաշտպանական գերատեսչությունների համագործակցության այս մակարդակն Ադրբեջանի հետ հարաբերություններում Իրանի համար խնդիրներ չի ստեղծում՝ հաշվի առնելով վերջիններիս միջև ամենատարբեր ոլորտներում առկա ակտիվ փոխգործակցությունը:

Հավանաբար, ներկայումս գործող կողմնորոշիչների համակարգում Իրանի և Հայաստանի ռազմական համագործակցությունը չի դիմանա չափազանցված ակտիվացման ու բուն սպառազինությունների մատակարարումներին: Իրանն, անտարակույս, Հայաստանին կարող է շատ բան առաջարկել՝ լազերային թիրախավորմամբ “խելացի” ռեակտիվ “Բասիր” արկեր և փոքր հեռահարության “Քյաուսար” թևավոր հրթիռներ, ժամանակակից ռադիոտեղորոշիչ կայանքներ, ինչպես նաև բազմաթիվ այլ ոչ բարձրտեխնոլոգիական տեսակի սպառազինությունների տեսակներ: Սակայն Իրանի Իսլամական Հանրապետությունն անշեղորեն առաջնորդվում է Բաքվի և Երևանի միջև հավասարակշռություն պահպանելու սկզբունքով: Անգամ վերջին տարիներին Ադրբեջանի ռազմական բյուջեի նշանակալից տնական աճը չի համոզել Թեհրանին փոփոխելու նշված “հավասարակշռող” վերաբերմունքը: Այս կեցվածքը միանգամայն հասկանալի է, քանի որ Իրանի Իսլամական Հանրապետությունը տարածաշրջանային անհրաժեշտ հավասարակշռության պահպանման հույսը դնում է Ռուսաստանի վրա: Դրանով է բացատրվում իրանական կողմի դրական արձագանքը Երևանում սույն թվականի մայիսին անցած ռազմական շքերթում

ռուսական «Իսկանդերների» հայտնվելուն: Բացի դրանից, Հայաստանի օգտին հայ-ադրբեջանական դիմակայության մեջ մտնելը չի բխում Իրանի պետական շահերից գոնե այն պատճառով, որ Թեհրանի քաղաքական և տնտեսական շահերն ավելի մեծ չափով կապված են Բաքվի, քան Երևանի հետ: Օրինակ, հենց Ադրբեջանի միջով է անցնելու Իրանն ու Ռուսաստանը միացնելիք նոր երկաթուղին, որը, միաժամանակ, դառնալու է Կասպից ծովի շուրջ երկաթուղային շրջանակի կարևոր բաղադրիչ:

Այս համատեքստը հազիվ թե կարող էր փոխել Հայաստանի պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի և Իրանի պաշտպանական գերատեսչության ղեկավարի մեկ այլ տեղակալի՝ Նասրոլա Քալանթարիի հետ հոկտեմբեր ամսին կայացած հանդիպումը: Հաշվի առնելով այն, որ բանակցությունների ընդլայնված ձևաչափին մասնակցել են ՀՀ ՊՆ Ռազմաարդյունաբերական կոմիտեի ղեկավար Դավիթ Փախչանյանն ու փոխնախարար Դավիթ Տոնոյանը, կարելի է եզրակացնել, որ հանդիպման ժամանակ քննարկվել են գերազանցապես թիկունքային ծառայությունների միջև համագործակցության և համապատասխան արտադրանքի մատակարարումների հետ կապված հարցեր:

Առանց տրվելու հայ-իրանական զուտ ռազմական համագործակցության և Իրանից Հայաստան տարբեր զինատեսակների մատակարարման մասին դեռևս անառարկայական երազանքների՝ կարելի է արձանագրել առկա զարգացող կապերից ստացվող օգուտի նշանակալիությունը: Հիշեցնենք, որ ապրիլյան դիմակայության օրերին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերն արձանագրել են թիկունքային ապահովման ոլորտում առկա թերացումները, որոնց հաղթահարման հարցում իրանական կողմի աջակցությունը կարող է լուրջ դրական դեր ունենալ, թեև վերջնական շեշտադրումները երևալու են երկու երկրների նախագահների երևանյան հանդիպման ժամանակ:

2017 թվականին ընդառաջ. միջազգային «ջունգլիների» լուռ ֆատալիզմը



Ռուբեն Հ.ՄԵՀՐԱԲՅԱՆ
«Առավոտ»-ի ռուսական տարբերակի խմբագիր
Երևան

2016 թվականը պատմության գիրկն է անցնում՝ դառնալով վերջինիս, մեղմ ասած, ոչ փառավորագույն կամ լավագույն գլուխը:

Մեր խոշորագույն հարևանները՝ Իրանն ու Թուրքիան, անմիջական մասնակցության մակարդակով ներքաշված են Սիրիայում ընթացող կեղտոտ և արյունալի հակամարտության մեջ: Մեր հյուսիսային հարևան Վրաստանը՝ Ռուսաստանի հետ հակամարտության համապատկերում շարունակում է ընթանալ դեպի Արևմուտք, թեև չափազանցություն կլինի պնդել, որ հոկտեմբերյան ընտրություններից հետո երկիրն ավելի ամրապինդ է դարձել, իսկ նրա ճամփան՝ անամպ ու հեռանկարներն՝ ավելի պայծառ:

Մեր «ռազմավարական դաշնակից» Ռուսաստանը շարունակում է Արևմուտքի հետ «անիմաստ և անողորմ» դիմակայությունը, որը նորանոր դիմագծեր ու ահագնացող դաժանություն է ստանում՝ հետևելով խորհրդային կայսրության ընթացքին և բացառիկ ճշգրտությամբ կրկնելով վերջինիս կործանարար քայլերը:

ԵՄ-ում տեղի ունեցած «Բրեքզիտը» և ԱՄՆ-ում Թրամփի ընտրությունը՝ «Արևմուտք» անուն կրող այսբերգի երևացող հատվածի երկու գագաթներն են, որոնք արտացոլել են ազատական ժողովրդավարությունների կառուցակարգային ճգնաժամը, որն, առանց չափազանցնելու, աննախադեպ է՝ 20-րդ դարի 30-ական թվականներից ի վեր: Պատահական չէ, որ ԵՄ Արևելյան գործընկերությունը փշրվել է Միացյալ Եվրոպայի հետ հետխորհրդային եվրոպական երկրների մերձեցման ռազմավարության հետ միասին: Եվրախանդավառությունը պահպանվում է սոսկ եվրաբյուրոկրատների հռետորաբանության մեջ, թեև բուն գաղափարն ու վերջինիս ընկալումը չեն

անհետացել և երբեք չեն վերանա՝ մի օր կրկին վերադառնալով գործնական հարթություն: Բայց ո՞վ է այսօր կասկածի տակ առնվող եվրամիասնության գաղափարի կրողն ընդդեմ Եվրոպայի քաղաքական թատերաբեմերում մոլեգնող անպատասխանատու պոպուլիզմի «իններորդ ալիքի»: Եվ ի՞նչով կարող է այս ամենին հակադրվել եվրոպական քաղաքական գործիչների ներկայիս սերունդը, որը, սակավ բացառություններով, բաղկացած է հաշվապահների, բյուրոկրատների, իրականությունից կտրված և եվրոպական բարդ օրգանիզմում պատճառահետևանքային կապերից անտեղյակ պատեհապաշտներից, որոնց համար սկզբունքայնությունը հավասարազոր է «ճկունության բացակայության» և «փոխզիջման անընդունակ լինելուն», իսկ «պատմության դասեր» բառակապակցությունն՝ ընդամենը «անարժեք հնություն» ու «դատարկ զրնգոց» է:

Բնական է, որ այս ամենը չի սկսվել 2016 թվականից, այլ՝ շատ ավելի վաղ: «Վերբեռնումն» ԱՄՆ-ում և «շրյոդերացումը» Եվրոպայում ծնել են ներկայիս ավտորիտար հրեշների և նրանց մանր ճտերի, որոնք, ինչպես հետագայում փաստվել է, սկսել են Երկրորդ աշխարհամարտի և Սառը պատերազմի արդյունքներով ձևավորված աշխարհակարգի վերանայման գործընթացը, իսկ միջազգային հաստատությունների ապիկարությունը հատկապես ավտորիտար ռեժիմների համար ստեղծել է ռևիզիոնիստական պատրանքներ. «Մեզ ամեն ինչ կարելի է»: Հարևանների դեմ արշավանքները, «պտուտակների ձգումը» ներսում, մամուլի լռեցումը, քաղաքացիների իրավունքների սահմանափակումն ու ոտնահարումը և կատարյալ անպատժելիությունը վերոնշյալ երևույթներին կարող են հաղորդել ամենաարյունալի բնույթ: Մեր տարածաշրջանի պես տարածաշրջան-«խաչմերուկներով» անցնող տեկտոնական ճեղքվածքները դարձել են Ազատության սիրտը թիրախավորած ու կրակելու պատրաստ ատրճանակներ:

Ղարաբաղյան հակամարտության շուրջ հրադադարի մասին եռակողմ համաձայնագրի կնքմանը հաջորդած 22 «սառեցված» տարիներից հետո իրավիճակը պայթեց 2016թ. ապրիլին: Մեզ դիմակայում է մի ավտորիտար վարչակարգ, որի համար մեզ հետ թշնամությունը թվացյալ անսասանության անփոխարինելի աղբյուր է: Մեր «բարեկամն» այլ ավտորիտար կայսերական վարչակարգ է, որի համար Ամերիկայի և Արևմուտքի հետ թշնամությունը նույնպես թվացյալ անսասանության անփոխարինելի աղբյուր է: Հիշյալ երկուսն էլ միմյանց համար «կարևոր ռազմավարական գործընկերներ են»: Հենց այս մեր «բարեկամն» ու «ռազմավարական դաշնակիցն» է Ալիևին օժտել սպառազինություններով, «դաբրոյով» և ժամանակով, որպեսզի մեր շահերի հաշվին ամրապնդի իր դիրքերը «մերձավոր արտերկիր» հայտարարված մեր տարածաշրջանում: Հայկական կողմը կարողացավ դիմակայել, ապա նաև ամրացնել շփման գիծը, բայց տեղի ունեցածից ոչ մի քաղաքական դաս չքաղեց: Ավելին, ի վկայություն ասվածի՝ Երևանը ստորագրել է մի համաձայնագիր, որի համաձայն՝ «միայն պատերազմական իրավիճակում» Մոսկվայի ուղիղ հրամանատարությանն է հանձնել իր բանակային կորպուսներից մեկը՝ «զորքերի համատեղ միավորում» ստեղծելու համար:

Սբ. Ծննդյան արձակուրդներից անմիջապես հետո Հայաստանը թևակոխելու է նախընտրական պայքարի, ապա նաև՝ նոր ընտրական փուլ: Ներկայիս իրողությունների պայմաններում սա նշանակում է տուրբուլենտության նոր շրջան, և փաստ չէ, որ 2018թ. մենք դրանից ավելի ամրացած կամ գոնե առանց կորուստների դուրս կգանք, հատկապես, եթե չարվեն մի շարք անհրաժեշտ գործնական երզակացություններ:

Իսկ հայաստանյան քաղաքական ուժերին, դատելով որոշ սուբյեկտների քաղաքական անհամարժեքության ուղղակի ճգնաժամային աստիճանից, երբեմն թվում է, որ այսպիսի վտանգավոր հարևանության և սպառնաշատ գործընթացների պարագայում մեզ քառօրյա պատերազմի օրինակով կհաջողվի զերծ մնալ վերոնշյալ բոլոր վերահաս վտանգներից: Բովանդակային առումով, հայաստանյան քաղաքական ուժերը՝ հատուկենտ մարդկանց բացառությամբ, լռում են, իսկ նրանց հռետորաբանությունն ընդամենը քաղաքական դատարկության մեջ լսվող նախընտրական ձայնային խոտան է: Այսպես չպետք է լիներ պատերազմող երկրի պարագայում՝ պատերազմից ընդամենը մի քանի ամիս անց:

Հայաստանն արագ քայլերով մոտենում է «խնդրահարույց 2018»-ին, երբ ավարտվելու է Սերժ Սարգսյանի նախագահության երկրորդ ժամկետը: Մոտենում է՝ առանց փոքր իսկ պատկերացնելու իր լավն ու վատը: Կամ սոսկ «ամեն ինչ վատ է», «ոչինչ չի փոխվելու» կամ՝ «էլ ի՞նչ անենք» կարգի մտորումներ:

Մեր վտանգավոր հարևանությունն՝ ի դեմս սիրիական պատերազմի մեջ թաթախված և համատարած բռնաճնշումներն ամենօրյա դարձրած Թուրքիայի, նավթային խողովակների պարունակությունը կորցնող ու քաղաքացիների իրավունքները ոտնահարող, բայց հայերի դեմ մոտալուտ ռևանշի մասին երազող Ադրբեջանի, մեր պետականությունը ոտնակոխ անող «պուտինյան սապոգի» և վերջինիս՝ մեր շահերի համար «բարերար» լինելու մասին հայ պաշտոնյաների ու քաղաքական գործիչների «գիտական» բացատրությունների համապատկերում, Արևմուտքում տիրող լիակատար ապակողմնորոշվածության պարագայում, երբ չեն կարգավորվել անգամ ներքին շատ հարցեր (էլ չեմ խոսում Ուկրաինայի ու բռնազավթված Ղրիմի մասին), այս ամենը ձևավորում է այն իրականության սոսկալի ըմբռնումը, որ մենք անըմբռնելի, լուռ և ոչ համարժեք ճակատագրապաշտությամբ հայտնվել ենք միջազգային «ջունգլիներում», որտեղ հարցերը լուծվում են ոչ թե իրավունքի զորությամբ, այլ բիրտ ուժի միջոցով: Այս իրավիճակն այն աստիճան ոչ ադեկվատ է, որ հիշեցնում է «յուրային-օտար» ճանաչողական համակարգի խախտում, երբ օտարն ընկալվում է որպես յուրային, իսկ յուրայինը՝ օտար:

Մեզ մոտ քաղաքական որոշումների ընդունման համակարգը հիվանդ է. այն ընդունակ չէ պարզել իր «ցավերի» ակունքը և անգամ պատրաստ չէ «հարմարավետ դիրք» բռնել՝ մեզ, չգիտես ինչու, հենց անկախացումից ի վեր պատուհասած «ցավերի» սաստկացումից ազատվելու համար: Եվ այսպիսի քաղաքական ուղեբեռով, ձեռքբերումների ու կորուստների բացասական հաշվեկշռով մենք մուտք ենք գործում վտանգներով լի 2017 թվականը:

Այո՛, անտարակույս, իրավացի են նրանք, ովքեր հանրորեն կարևոր հարցերի մասին խոսելիս ասում են, որ «ամեն ինչ վատ է»: Բայց նրանք միայն մասամբ են իրավացի: Եթե այդպես, ապա ամեն ինչ շատ ավելի վատ է, քանի որ հրաշք չի լինելու: Կամ՝ իրար հաջորդելով երկու անգամ չի լինի: Մի անգամ հրաշքն արդեն եղել է. խորհրդային կայսրության անկումից հետո միջազգային ասպարեզ էր վերադարձել Անկախ Հայաստանը: Մեր «դաշնակիցն» այս հրաշքն անվանում է «խոշորագույն աշխարհաքաղաքական աղետ» և շարունակում է «կառուցել» իր «ռուսական աշխարհը»: Մեր «դաշնակիցը» և նրան «հոգեպես հարազատ» ավտորիտար վարչակարգերը ռազմավարորեն և պատմականորեն դատապարտված են: Սակայն մեր օգուտը նրանց անխուսափելի ձախողումից պետք է կռել հենց մեր օրերում, հենց այսօր, քանզի այն երկնային մանանայի պես մեր գլխներին չի իջնելու:

«Ազգ-բանակի» «նոր» գաղափարը՝ այժմյան մարտահրավերներին պատասխանի սոսկ արատավոր ձևախեղումն է: Այո՛, պատերազմը թակում է մեր դռները: Բայց միայն ազատ մարդկանց ազատ ազգը կարող է ստեղծել արևի տակ իր տեղը պաշտպանելու ունակ բանակ, մինչդեռ Ազատության դեմ ոտնձգությունները նրանց ուժգնորեն ներսից են քանդում: Չէ՞ որ բանակը սոսկ պետության և հասարակության գործիք է, որի վիճակը դրանց հասունության և կայացվածության հետևանքն ու արգասիքն է: Ազատությունը կարող է ժամանակավորապես նահանջել, բայց պատմականորեն այն չի կարող չհաղթել. պատմության ընթացքն ասվածի ակներև վկայությունն է: Կարծես թե մենք սա որպես ընդհանրություն դեռ չենք ըմբռնել և նոր տարի ենք մտնում առանց այս տեսակ կենսականորեն կարևոր պատճառահետևանքնային կապերը հասկանալու: Բայց այս մարտահրավերը նաև հնարավորությունն է, որի կենսագործումը Քաղաքակրթության առջև մեր համամարդկային պարտքի մասնաբաժինն է:

Մենք չենք վարում, չենք ցանում, չենք կառուցում…



Իզիդա ՃԱՆԻԱ
«Нужная газета»-ի գլխավոր խմբագիր
Սուխում

Անցնող նահանջ տարին լի էր քաղաքական իրադարձություններով՝ համագումարներով, ցույցերով, գրոհներով և մեր պես փոքր երկրի համար աheռելի թիվ կազմող կուսակցությունների և հասարակական-քաղաքական շարժումների ստեղծմամբ, ինչպես նաև բնական աղետներով՝ ջրհեղեղներով, փոթորիկներով, արևադարձային անձրևներով, որոնք, պատճառ դառնալով կոմունալ ծառայությունների և էներգետիկ համակարգի աշխատանքի խանգարման, առաջացրել են մի շարք անհարմարություններ։

Եթե բնական աղետներն ուղղակիորեն հարվածում էին հասարակ մարդկանց, ապա երկրի քաղաքական կյանքը բավականին հեռու էր իշխանությանը վերադառնալ կամեցած և այժմ իսկ ձգտող անձանց խնդիրներից։ Վերջիններիս ճնշմամբ տեղի է ունեցել կառավարության ևս մեկ աննպատակ փոփոխություն, որին նախորդել էր Ներքին գործերի նախարարության շենքի գրոհը։

Կուրորտային սեզոնի ամենաթեժ պահին՝ հուլիսի 5-ին, նախկին պաշտոնյաներից բաղկացած ընդդիմադիր «Ամցախարա» կուսակցությունը ՆԳ նախարարի հրաժարականի պահանջով բողոքի ցույց է անցկացրել։ Նախարարի հրաժարականի պահանջի համար ձևական պատրվակ է ծառայել «երկրում վատթարացած քրեածին իրավիճակը», որն, իրականում, կայուն կերպով «վատթարացած» է արդեն երկու տասնամյակների ընթացքում։ Իհարկե, ակցիայի կազմակերպիչները «կորցրել» են ամբոխի վրա վերահսկողությունը, որը «լիովին տարերայնորեն» գրոհել է ՆԳ նախարարության շենքը։ «Տարերային» գրոհի ժամանակ օգտագործվել են «Մոլոտովի կոկտեյլներ», իսկ 19 ոստիկան տարբեր ծանրության վնասվածքներ են ստացել։ ՆԳ շենքի շուրջ ծավալված իրադարձությունների կենտրոնում հայտնվել են նախորդ տարիներին ուժային կառույցներում աշխատած անձինք։ Եթե հավատանք ընդդիմության առաջնորդներին, ապա ոչ մի արտառոց կամ ողբերգական բան տեղի չի ունեցել։ «Իհարկե, հրմշտոցում մարդիկ են տուժել, շատերն ուշաթափվում էին։ Մենք նրանց դուրս էինք բերում, օգնում էինք։ Ոմանք վնասվածքներ են ստացել։ Բայց, ընդհանուր առմամբ, պատահածը որպես ողբերգություն ներկայացնել չի կարելի»,-

ցինիկաբար ասում էր գրոհի հետևանքները մեկնաբանող «Ամցախարա» կուսակցության գաղափարաբաններից Իրինա Ագրբան:

ՆԳ շենքի գրոհին նույն ընդդիմության նախաձեռնությամբ հաջորդել է «նախագահի հանդեպ անվստահության մասին» հանրաքվեն: Հանրաքվեի արդյունքներն ապշեցրել են բոլորին. դրանց մասնակցել է մեկ տոկոսից պակաս բնակչություն: Հանրաքվեն ճանաչվել է չկայացած. հասարակությունը ցուցադրել է քաղաքական գործիչների նկատմամբ իր ունեցած անվստահությունը և նրանց բարձրացրած հարցերի անարդիականությունը: Ընդդիմության հետ երկխոսությունը հաստատելու ուղղությամբ իշխանության հետագա փորձերն ոչ մի արդյունքի չեն հանգեցրել. ընդդիմության ներկայացուցիչները կտրականապես հրաժարվել են երկխոսությունից և քաղաքական կուսակցությունների Համակարգող խորհրդին մասնակցելուց:

Քաղաքական ամռան արդյունքը կառավարության հրաժարականն էր: Ընդդիմադիր ուժերը հրաժարվել են մասնակցել նոր կառավարության ձևավորմանը, իսկ նախագահի առաջարկությունն ընդունած հասարակական շարժումների առաջնորդներին պիտակավորել են որպես «շտրեյկբրեխերներ»:

Սակայն կառավարությունը ձևավորվել է, իսկ ընդդիմությունն՝ ի դեմս «Ամցախարա» կուսակցության անդամներ, նախագահի նախկին թեկնածու, Ազգային անվտանգության ծառայության պաշտոնանկ ղեկավար Բժանիայի, նախկին վարչապետ Լակերբայայի և շատ այլ նախկինների շուրթերով նախագահին վերջնագիր են ներկայացրել՝ պահանջելով կամովին վայր դնել նախագահական իրավասությունները՝ պաշտոնավարման ժամկետի լրանալուց շուտ: Որոշում ընդունելու համար պետության ղեկավարին տրվել է ընդամենը 15 օր, որից հետո դեկտեմբերի 15-ն ընդդիմադիրները խոստացել են ժողովրդական հավաք անցկացնել:

Երբ իշխանության և ընդդիմության հակամարտությունը հասնում է գագաթնակետին՝ ասպարեզում սովորաբար ի հայտ է գալիս «երրորդ ուժը»: Այս անգամ ևս առանց այլընտրանքի գործը գլուխ չեկավ:

Այլընտրանքային ուժի դերում փորձեց հանդես գալ «Միացյալ Աբխազիա» կուսակցությունը, որը հիմնադրվել է ներկայումս հանգուցյալ, Աբխազիայի նախկին նախագահ Բագապշի կողմից՝ որպես «Միացյալ Ռուսաստան» կուսակցության կրկնօրինակ: Այսօր կուսակցությունը ղեկավարում է նախկին արտգործնախարար, նախկին վարչապետ և խորհրդարանի պատգամավոր Սերգեյ Շամբան (կուսակցության ներկայացուցիչները ներկայացված են իշխանության բոլոր ճյուղերում): Իհարկե, բանակցություններն ընթանում են «գրասենյակների լռելյայն միջավայրում», բայց դրանցից լուրեր են սողոսկել, թե կուսակցությունը հանդես է եկել «կոալիցիոն կառավարություն» ձևավորելու առաջարկով՝ նախատեսելով տնտեսական ողջ բլոկը բաշխել ընդդիմության առաջնորդների միջև, այսինքն՝ վերադարձնել 2014թ. նախագահ Անկվաբի հրաժարականից հետո (որը նույնպես տեղի էր ունեցել քաղաքական ճգնաժամի բարդ պայմաններում) պաշտոններից հեռացածների մեծ մասը:

Այսուհանդերձ, թվում է, որ իր քաղաքական գործունեությունը որպես քաղաքական փորձագիտական ակումբ սկսած և քաղաքական գործիչների (որոնք դեռ չեն հասցրել վարկաբեկվել գործադիր իշխանության մեջ աշխատելով) համեմատաբար ավելի երիտասարդ կազմ ունեցող «Այնար» կուսակցությունը փորձում է խլել նախաձեռնությունը Բագապշի օրոք ձևավորված քաղաքական վերնախավից և բոլոր բարի կամքի մարդկանց կոչ է հղել մասնակցելո դեկտեմբերի 13-ի համագումարին, որը, փաստորեն, երկու օրով նախորդելու է «Ամցախարա» կուսակցության հրավիրած ժողովրդական հավաքին:

«Մեզ համար նշանակություն չունեն ձեր քաղաքական նախապատվությունները. մենք մեր համաքաղաքացիներին չենք բաժանում ըստ քաղաքական ճամբարների, կրոնական համոզմունքների կամ ազգային պատկանելության: Մեզ համար կարևոր է, որ դուք ձեզ այս երկրի քաղաքացի եք համարում և այս երկիրը ձեր Հայրենիքն է», - ասվում է «Այնար» կուսակցության կոչում:

Դեկտեմբերին Աբխազիայում կարող են տեղի ունենալ նշանակալից իրադարձություններ, այսինքն, Աբխազիայի քաղաքական գործիչները մեզ սպառնում են (խոստանում են) երկրորդ պլան մղել Ամանորի ու Սբ. Ծննդյան տոնակատարությունները, թերևս նաև «կանանց միջազգային տոն մարտի 8-ը», քանի որ մարտին Աբխազիայում պետք է անցնեն օրենսդիր իշխանությունը ձևավորող խորհրդարանական ընտրություններ:

Ինչո՞ւ չեմ ընթերցողներին տեղեկացնում քաղաքական ուժերի շռայլած խոստումների մասին: Այն պարզ պատճառով, որ ներկայիս «ընդդիմադիր» քաղաքական վերնախավը չի թաքնվում որևէ ժողովրդավարական կարգախոսի ներքո. նրա առաջնորդները հանրության հետ հանդիպումներում, ժողովրդական ժողովներում և ցույցերում ուղիղ հայտարարում են, որ իրենց գլխավոր նպատակը՝ սովորական իշխանափոխությունն է: Չկան ծրագրային հռչակագրեր, տնտեսապես բարգավաճելու կամ աշխատավարձերն ու թոշակները բարձրացնելու մասին խոստումներ: Թերևս հենց սրանով է պայմանավորված հասարակության շրջանում ներկայիս ընդդիմության ցածր վարկանիշը:

Սակայն կանխատեսել Աբխազիայում իրադարձությունների հետագա զարգացումը դժվար է նաև այն պատճառով, որ քաղաքական գործիչների նկատմամբ հասարակության անվստահությունը գագաթնակետին է հասել: Շատ հավանական է, որ կայանալիք խորհրդարանական ընտրություններում ընտրազանգվածը ողջ չափով կցուցաբերի քաղաքական գործընթացներին «ոտքերով» մասնակցելու դժկամությունը: Այսպիսով, այսօրվա քաղաքական գործիչներին չէր խանգարի մտածել նախ և առաջ հենց ընտրողների մասին:

Իսկ այսօր՝ դեկտեմբերի 10-ին, Սուխումում տեղի են ունենում խորհրդարանական լրացուցիչ ընտրություններ: Տեղեկատվությունն անմխիթար է. բոլոր ընտրողները, կարծես թե, ուղղակի անտեսել են ժողովրդի ընտրյալ դառնալ ձգտող թեկնածուներին:

Այսպիսին էր այս տարին, որի արդյունքները դեռ վաղ է ի մի բերել: Ակնբախ է միայն այն, որ այս տարի մենք չենք վարել, չենք ցանել և չենք կառուցել, այլ ընդամենը դիտում էինք աթոռակռվով տառապող փոքրաթիվ խմբերի քաղաքական հակամարտություն: Ակնհայտ է, որ նրանք բոլորը մեզ ձանձրացրել են:

Տարվա արդյունքները՝ որպես դաս քաղաքական գործիչների համար



Ալան ՊԱՐԱՍՏԱԵՎ
Անկախ փորձագետ
Ցխինվալ

Տարվա ավարտին ընդունված է ի մի բերել արդյունքները: Բայց արդյունքները, ինչպիսին էլ դրանք լինեն, վերլուծաբանների և քաղաքագետների գործն են: Ավելի գործնական մարդիկ, ասենք՝ քաղաքական գործիչները, ընդհակառակը, սովոր են արդյունքներից առաջ անցնել և արդյունքները որպես դասեր ընկալել: Մասնագիտությամբ ուսուցիչ լինելով՝ ես չեմ կարող չսկսել դասը սխալների վրա աշխատանքից, չեմ կարող գոնե չքննարկել, թե ինչ են այս տարում ուսանել անցած տարվա սխալներից: Այսպես, անցած տարին, արտապատկերված այս՝ դեռևս չանցած տարվա վրա: Հարավային Օսիայի քաղաքական վերնախավի քաղաքական դասեր սերտած լինելու լավ օրինակ կարող ենք դիտել «Մեծ Պայմանագրի» ստորագրման հետ կապված պատմությունը:

Անցած՝ 2015 թվականը կարելի է անվանել Պայմանագրի համար պայքարի տարի: Համարյա ողջ տարվա ընթացքում ընթանում էր «ՌԴ հետ համագործակցության և ինտեգրման մասին Պայմանագրի» վիպերգը: Հանրության դատին անընդհատ ներկայացվում էին այս պայմանագրի տարբեր խմբագրումներն ու սևագրերը: Այս ամենն ուղեկցվում էր աղմկահարույց բանավեճերով ու մեղադրանքներով: Կրեմլյան «կուրատորների» (այսպես են անվանում Հարավային Օսիայի հետ հարաբերություններում ներգրավված ռուսաստանյան բազմաթիվ կառույցների) գլուխներն ուղղակի պտտվում էր: Սակայն նույնիսկ ՀՕՀ-ում բնակվող քաղաքացուն դժվար էր հասկանալ տեղի ունեցող զարգացումների մանրամասներն ու ծալքերը, ինչ մնաց «կուրատորներին»...

Պարզ էր միայն մեկ բան. Հարավային Օսիայի քաղաքական ուժերը, մասնավորապես՝ նախագահական և խորհրդարանական ճյուղերը, պայքարում էին առավել «ռուսամետ» լինելու բարձր կոչման համար: Հարավային Օսիայում, ըստ էության, հնարավոր չէ գտնել ոչ միայն իշխանության որևէ ճյուղ, այլև քաղաքացիական հասարակության գոնե փոքր ծիլ, որը ռուսամետ չլինի: Ռուսամետության մեր հիշատակած երկու ուղղությունների տարբերությունն էլ այն էր, որ խորհրդարանի ղեկավար Անատոլի Բիբիլովն առաջ էր տանում ՀՕՀ-ը ՌԴ կազմ մտցնելու քաղաքական մարտավարությունը՝ պնդելով երկրում այդ հարցով հանրաքվե անցկացնելու անհրաժեշտությունը և, վերոնշյալ հեռանկարից ելնելով, Պամյանագրի

մեջ միացյալ պետական կառույցների մասին դրույթներ ներառելը: Մյուս կողմից, նախագահական թիմը կողմ էր ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակի իրողությունների շրջանակում առավելագույն ինտեգրման մակարդակ ենթադրող պայմանագրին, որը բխում էր այն հանգամանքից, որ Ռուսաստանի հետ Հարավային Օսիայի միավորումը ցանկալի, բայց արդի փուլում անիրագործելի ձեռնարկ է:

Հաղթեցին իրապաշտները: Պայմանագիրը ստորագրվեց 2015թ. մարտին: Բայց ուղիղ մեկ տարի անց՝ 2016թ. ապրիլին, նախագահ Լեոնիդ Տիբիլովը հանդես եկավ հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ, որի միջոցով ՀՕՀ քաղաքացիները պետք է արտահայտեին իրենց հայրենիքի՝ Ռուսաստանի կազմ մտնելու հեռանկարի վերաբերյալ տեսակետ: Թվում էր, թե նախագահը փորձում է խորհրդարանի խոսնակ Բիբիլովից խլել ամենառուսամետ լինելու նախաձեռնությունը, հակասելով իր իսկ նախկին հայտարարություններին առ այն, որ ՌԴ կազմ մտնելու հարցի բարձրացումը ժամանակավրեպ է և Ռուսաստանի քաղաքական թշնամիների համար ձեռնտու: Բայց դա միայն թվում էր. իրականում ամեն ինչ վարպետորեն էր բեմականացված: Ծրագրվող հանրաքվեի հարցումներում խոսվում էր ոչ այնքան ՌԴ կազմում ՀՕՀ-ը ներառելու, այլ հանրապետության սահմանադրության մեջ այնպիսի փոփոխություններ մտցնելու մասին, որոնք հետագայում երկրի նախագահին թույլ կտային հանդես գալ Ռուսաստանի կազմ մտնելու խնդրանքով: Խոսքն այն «հետագայի» մասին էր, երբ աշխարհում տիրող իրավիճակի տեսանկյունից ՌԴ կազմ ՀՕՀ մտնելու խնդրանքն այլևս «լուրջ ռիսկերի չի ենթարկի մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանին»: Հենց այսպես է ՀՕՀ նախագահ Լ. Տիբիլովը սերտել 2015թ. դասերը, երբ նա մեղադրվել էր օս ժողովրդի՝ երկու Օսիաները միավորելու և Ռուսաստանի կազմ մտնելու դարավոր երազանքն անտեսելու մեջ: Իսկ ընդամենը մեկ տարի անց Տիբիլովն, առանց Ռուսաստանը անհարմար դրության մեջ դնելու, դարձավ Ռուսաստանի կազմ մտնելու շարժման առաջատարը:

Արդյո՞ք 2016թ. դասերը սերտելու և ձեռք բերված գիտելիքներն իրացնելու փորձը կկրկնվի նաև 2017 թվականին: Չէ՞ որ, շարունակելով դպրոցական թեմայի հետ համեմատությունը, 2017 թվականը նաև քննական, այսինքն՝ ընտրությունների տարի է:

Ու քանի որ այդ պաշտոնի հավակնորդները երեքն են՝ փորձենք պարզել այն առարկան, որի դասերը պետք է սերտեն թեկնածուները 2016-ին:

Լեոնիդ Տիբիլովը գործող նախագահն է: Նա գերազանցիկ չէ, բայց շատ առարկաներից ստանում է «հարվածային» կամ, անգամ, «գերազանց» գնահատականներ: Այսպես, սոցիոլոգիայից նա ունի կայուն «4»: Հաշվի առնենք նաև այն, որ նրանից առաջ եղած մարդիկ անգամ «3»-ի չէին «ձգում»: Վերլուծաբանները նրան գնահատում են որպես հանրապետության այնպիսի ղեկավարի, որին հաջողվել է նվազեցնել հասարակության մեջ առկա լարվածության մակարդակը: Նրան համարում են մի մարդ, որն «ի տարբերություն իրենից առաջ եղած ղեկավարների՝ իր ընդդիմադիրների և մրցակիցների հետ նախընտրում է շփվել ավելի քաղաքակիրթ ու մեղմ եղանակներով»:

Վերականգնողական շինարարության բնագավառում անտարակույս՝ «4»: Դիտորդները նշում են. «…հանրապետությունը Տիբիլովի կառավարման օրոք արտաքնապես տառացիորեն վերափոխվել է. Ցխինվալը հետզհետե վերածվում է

բարեկարգ քաղաքի, որտեղ կառուցվել են սոցիալական բազմաթիվ օբեկտներ»: Թեև շատերը հավելում են, որ այս «առարկան» նախագահին օգնում են սերտել Մոսկվայից»: Բայց չէ՞ որ նախորդներին էլ Մոսկվայից ոչ ոք չէր խանգարում:

Իսկ «Իրավագիտություն» առարկայից կան լուրջ թերացումներ: Նախընտրական արշավի ընթացքում խոստացված Սահմանադրական դատարանը և շրջանային վարչակազմերի ղեկավարների ընտրելիությունը, որոնք դե-յուրե սահմանադրորեն ամրագրված են, դե-ֆակտո ցայսօր սոսկ խոստումներ են մնում:

Լավ է, որ գոնե ընդունվել է խորհրդարանի ձևավորման խառը՝ մեծամասնական-համամասնական համակարգի ներդրման մասին որոշումը: Նոյեմբերի 30-ին Հարավային Օսիայի խորհրդարանը փոփոխություններ ընդունեց, որոնց համաձայն օրենսդիր մարմնի ընտրությունները կանցկացվեն մեծամասնական-համամասնական համակարգով: Մտահոգություն կա, որ նախորդ ընտրարշավում խոստացված այլ կետերի կատարումը գալիք ընտրարշավի ժամանակ հասարակության կողմից ընկալվելու է որպես վերաքննություն:

ՀՕՀ խորհրդարանի խոսնակ Անատոլի Բիբիլովը նախագահի երկրորդ և ոչ նվազ չափով սպասելի թեկնածուն է: Սա այն դեպքն է, երբ դասերը պետք է սերտվեն սեփական իսկ գործողությունների արդյունքներից: Բիբիլովն ստեղծել է ՀՕՀ պատմության մեջ թերևս ամենաազդեցիկ ու կուռ շարքերով կուսակցությունը, որն այսօր խորհրդարանում իշխանության և մեծամասնության կուսակցությունն է: Այս կուսակցության նախաձեռնությունները և իր առաջնորդի գործողություններն անցնող տարվա ընթացքում հարուցում էին հասարակության աշխույժ արձագանքը: Խոսքը թե՛ կառավարության նախագահ Դ. Կուլումբեգովի աշխատանքին տրված անբավարար գնահատականի, թե՛ մի շարք պաշտոնյաների հասցեին հնչած քննադատության, թե՛ Օստելեկոմ-Մեգաֆոն բջջային ցանցի բաժանորդների իրավունքների պաշտպանության մասին է: Առանձին վերցված յուրաքանչյուր դեպքը հասարակության աջակցությունն է վայելում և անհրաժեշտաբար հիմնավորված է: Բայց, եթե ընդհանուր դատենք, Բիբիլովի և նրա քաղաքական շրջապատի ընտրած ուղեգիծն ու ոճը մտահոգում և վախեցնում են իր ագրեսիվությամբ և խռովարարական հակումներով:

Մարդիկ նոր են սկսել հանգստանալ ցույցերից, հեղափոխություններից և պատերազմներից, թշնամիների վհուկորսից ու դավաճանության մեջ մեղադրանքներից: Թևավոր հետևակի եռանդուն և ժիր գեներալ Անատոլի Բիբիլովը համակրելի և մոտիկ է հարավօսական միջին վիճակագրական քաղաքացուն, բայց վերջինս կնախնտրի քվեարկել շինարարի և երկրավոր քաղաքական գործչի օգտին: Կարծում եմ, որ որքան շուտ նախագահի թեկնածու Բիբիլովը սերտի այս դասը, այնքան ավելի մեծ կլինեն նրա շանսերը ձերբազատվելու իր այսօրվա կարգավիճակի առաջին բառից:

Ինչ վերաբերվում է նախկին նախագահ Էդուարդ Կոկոյտիին, ապա նա ևս դասեր ունի քաղելու 2016 թվականից: Ընդ որում՝ տարվա գլխավոր արդյունքից: Դաս հետևյալ թեմայով՝ ինչպե՞ս կարելի է հաջողությամբ իրականացնել հանրապետության վերականգնման ծրագիրը: Մրցակից տիբիլովյան թիմի տված այս դասը Էդուարդին կօգնի, թե ոչ՝ դժվար է ասել:

2016-ը կառուցողական երկխոսության տարի էր Հայաստան-ԵՄ հարաբերություններում



Աննա ԲԱՐՍԵՂՅԱՆ
Վերլուծաբան
Երևան

2016-ը Հայաստան-ԵՄ հարաբերություններում կառուցողական երկխոսության և հարաբերությունների անշտապ զարգացման տարի էր: 2013-ի հայտնի իրադարձություններից հետո 2015-ի վերջին եռամսյակում արդեն իսկ ուրվագծվում էին ՀՀ-ԵՄ հարաբերություններում կարգավորման և վերաթարմացման միտումները, երբ նշված տարվա դեկտեմբերի 7-ին ազդարարվեց Հայաստան-ԵՄ նոր համաձայնագրի կնքմանն ուղղված պաշտոնական բանակցությունների սկիզբը:

Սույն թվականի հունվարի 18-ին ՀՀ պատվիրակությունն, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորությամբ, մասնակցեց Բրյուսելում տեղի ունեցած Հայաստան-ԵՄ համագործակցության խորհրդի 16-րդ նիստին: Նիստի օրակարգում գլխավոր հարցը Հայաստան-ԵՄ նոր իրավական փաստաթղթի մշակումն էր, որը երկկողմ համագործակցությունը նոր հարթություն տեղափոխելու համար ամուր հիմք կծառայեր:

Սպասվելիք համաձայնագիրը կփոխարինի ԵՄ-Հայաստան գործող «Գործընկերության և համագործակցության համաձայնագրին», որը ներկայումս հարաբերությունները կարգավորող և առաջնահերթություններն ընգծող հիմնական փաստաթուղթն է: «Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը» բացի պաշտպանության հիմնահարցերից ընդգրկում է ԵՄ-Հայաստան հարաբերությունների գրեթե բոլոր ոլորտները: Այն ստորագրվել է 1996 թվականի ապրիլի 22-ին և ուժի մեջ մտել 1999 թվականի հուլիսի 1-ին՝ 10 տարի ժամկետով: Համաձայնագրի հիմնական նպատակն էր ավելի խորացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կապերն ու համագործակցել բազմաթիվ բնագավառներում՝ ապահովելով եվրոպական երկրներին հարիր բարեկեցիկ կյանք, ժողովրդավարական սկզբունքների և օրենքի գերակայություն, քաղաքացիների

շահերի, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանություն, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման դինամիկ և կայուն ընթացք:

Հայաստան-ԵՄ հարաբերությունների զարգացման և հատկապես քաղաքացիական հասարակությանն աջակցության տեսանկյունից կարևոր խթան էր նաև Եվրամիության արտաքին հարաբերությունների և անվտանգության հարցերի բարձրագույն ներկայացուցիչ, Եվրահանձնաժողովի փոխնախագահ Ֆեդերիկա Մոգերինիի մարտին կայացած այցը: Վերջինս հանդիպումներ ունեցավ նախագահ Սերժ Սարգսյանի, արտգործնախարարի, խորհրդարանական խմբակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, հանդիպումների ավարտին նախագահական նստավայրում տեղի ունեցած մամուլի ասուլիսում հայտարարեց որ Հայաստան-Եվրամիություն նոր բանակցություններում կարևոր է, որ մասնակից լինի հասարակությունը: Սա ևս մեկ ազդակ էր, որ ԵՄ-ն պատրաստվում է Հայաստանում իր հետագա գործունեությունն ավելի շատ նպատակաուղղել հանրային աջակցության ամրապնդմանն ու քաղաքացիական հասարակության զարգացմանը:

2016-ի ընթացքում կայացավ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև նոր շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցությունների վեց փուլ, որոնցից երեքը Երևանում, իսկ երեքը՝ Բրյուսելում: Բանակցություններին հաջորդող մամուլի հաղորդագրությունները բավականին զուսպ էին և դուրս չէին գալիս արձանագրային ձևաչափից: Առայժմ բացահայտված չեն նաև քննարկվող փաստաթղթի հիմնական բնույթն ու բովանդակությունը, սակայն, դատելով պաշտոնական հաղորդագրություններից և դիվանագետների տրամադրած «ժլատ» տեղեկատվությունից, նոր փաստաթուղթն «Ասոցացման համաձայնագրի» նորացված տարբերակն է, որն ընգրկելու է բոլոր այն դրույթները, որոնք չեն հակասում ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցությանը: Սպասվում էր, որ համաձայնագիրը պատրաստ կլինի ընթացիկ տարում, սակայն 2016-ի ընթացքում ԵՄ-ն կարծես թե սպասողական դիրքորոշում էր որդեգրել: 2017-ի ապրիլին Հայաստանում խորհրդարանական ընտրություններ են, և ԵՄ-ի հետ ստորագրված փաստաթուղթը քաղաքական էլիտայի ձեռքին լրացուցիչ հաղթաթուղթ կդառնար՝ արդարացնելու 2013-ի ձախողումները: Այդ մասին են վկայում նաև դեկտեմբերի 9-ին Բրյուսելում կայացած բանակցությունների վեցերորդ փուլի արդյունքները, երբ նշվեց, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա հանդիպումների ժամանակացույցի վերաբերյալ:

Բանակցությունները ակտիվ շարունակվում են նաև տնտեսական հարցերի վերաբերյալ, ինչի ապացույցն է դեկտեմբերի 15-ին Բրյուսելում կայացած ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի 17-րդ նիստը: Նիստի ընթացքում կողմերը քննարկել են ՀՀ-ԵՄ համագործակցության ապագա համաձայնագրին, ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական հարաբերություններին և տնտեսական զարգացումներին առնչվող հարցեր: Օրակարգում ներառված էին նաև արդարադատության, ազատության, անվտանգության, տրանսպորտի և էներգետիկայի ոլորտում համագործակցության, բազմակողմ համագործակցության ձևաչափի, ինչպես նաև

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերաբերյալ հարցեր:

2016-ի ընթացքում Հայաստանն ունեցավ նաև կարևոր ձեռքբերում, մասնավորապես՝ միացավ «Հորիզոն-2020» ծրագրին: «Հորիզոն-2020» ծրագրում Հայաստանի ներգրավվածությունը հանրապետության գիտական կազմակերպություններին, բուհերին, ինչպես նաև անհատ գիտնականներին ու ասպիրանտներին հնարավորություն է տալիս մասնակցել գիտության և տեխնիկայի զարգացման արդի մակարդակին համապատասխանող առաջնակարգ և կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, միջազգային լայնընդգրկուն գիտական համագործակցությունների աշխատանքներին, օգտվել եվրոպական գիտական կազմակերպությունների և համալսարանների ենթակառուցվածքներից, բարձրացնել տեխնոլոգիական ու նորարարական ունակությունները, գիտական հետազոտությունների մակարդակն ու արդյունավետությունը, ընդգրկվել գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման ու վերապատրաստման եվրոպական ծրագրերում:

«Հորիզոն-2020» ծրագրին ասոցացված անդամակցության համար Հայաստանը յուրաքանչյուր տարի պետք է կատարի ֆինանսական ներդրում: Բանակցությունների արդյունքում հաջողվել է ձեռք բերել պայմանավորվածություն, ըստ որի Հայաստանի ֆինանսական ներդրումը լինելու է 87.5% զեղչի պայմաններում: Սա իսկապես ֆանտաստիկ հնարավորություններ է բացում հայ գիտական հանրույթի առջև, ինչի շնորհիվ հայաստանցի գիտնականները կարող են ինտեգրվել եվրոպական նորարական ծրագրերին և հանդես գալ սեփական նախաձեռնություններով:

ԵՄ-ն և ապրիլյան պատերազմը

2016-ին տարածաշրջանի էպիկենտրոնը Արցախն էր, ուր ապրիլին վերսկսված պատերազմի ցնցումները զգոնացրին նաև ԵՄ-ին: ԵՄ-ի համար Արցախում պատերազմի բռնկումը ամենաանցանկալի սցենարներից մեկը կարող է լինել: Դեռևս 2003-ին ընդունված «Եվրոպական անվտանգության ռազմավարության» մեջ ԵՄ-ն որպես հիմնական սպառնալիք մատնանշել է տարածաշրջանային հակամարտությունների առկայությունը: Այդ դրույթն ամրագրվեց նաև «Եվրոպական նոր գլոբալ ռազմավարության» մեջ: Գնալով ընդլայնվող ԵՄ-ն, որ արդեն դարձել է մեր տարածաշրջանի հարևանը, ցանկանում է հարևանության գոտում տեսնել կայուն զարգացող և հակամարտություններից զերծ տարածաշրջան: Եվրոպական հարևանության գոտում յուրաքանչյուր ցնցում կարող է սասանել առանց այն էլ փխրուն ԵՄ-ի հիմքերը: Ուկրաինայի և հատկապես Սիրիայի հակամարտությունները ԵՄ-ին կանգնեցրել են միգրացիոն լուրջ ճգնաժամի առջև, և նոր պատերազմի բռնկումն իր բոլոր հետևանքներով ամենևին էլ ցանկալի սցենար չէ ԵՄ-ի համար:

Բացի դա, չպետք է մոռանալ նաև տարածաշրջանի էներգետիկ նշանակության մասին: Չնայած Ադրբեջանի գազային պաշարները ԵՄ-ի էներգետիկ պահանջարկի տեսանկյունից չնչին խնդիր են լուծում, սակայն էներգետիկ անվտանգության՝ աղբյուրների և ուղիների բազմազանեցման տեսանկյունից, որոշակի կարևորություն ունեն: Ներկա պահին, երբ Իրանի, Թուրքմենստանի հետ գազային գործարքներն իրականություն չեն դարձել, ադրբեջանական գազը Ռուսաստանը շրջանցող եզակի աղբյուրներից է, որից ԵՄ-ն չի ցանկանա հրաժարվել: Միաժամանակ, հարկ է հիշել, որ դեպի ԵՄ գնացող գազամուղների և ադրբեջանական հանքավայրերի շահագործման մեջ ներգրավված են նաև եվրոպական տարբեր պետությունների վերազգային կազմակերպություններ, որոնք բավականին մեծ ազդեցություն ունեն իրենց պետությունների վրա: Որպեսզի տարածաշրջանում խաղաղություն հաստատվի, իսկ եվրոպական ներդրումներն ապարդյուն չլինեն՝ հարկ կլինի տարբեր եվրոպական կառույցների կողմից ճնշում գործադրել նախահարձակ կողմի վրա՝ խուսափելու վերահաս և լայնածավալ պատերազմից:

Եվրոպական խորհրդարանն ապրիլի 12-ի իր լիագումար նիստում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ կատարեց Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրադրությանը: Հարկ է փաստել, որ ի տարբերության Եվրոպայի խորհրդի, որտեղ ադրբեջանական միլիոններն իրենց սև գործը հաճախ կարողանում են անել, եվրախորհրդարանում բավականին հավասարակշիռ դիրքորոշում ցուցաբերվեց Արցախում տեղի ունեցած թեժացումների նկատմամբ: Ելույթ ունեցավ ԵՄ արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին, իսկ այնուհետև թեմայի շուրջ իրենց տեսակետներն արտահայտեցին Եվրոպական խորհրդարանի մի շարք պատգամավորներ, որոնց գերակշիռ մասը հանդես եկավ անաչառ դիրքորոշումներով՝ առաջարկելով խստացնել Ադրբեջանի հանդեպ ճնշումները:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք 2016 թվականը, ապա կարելի է ասել, որ այն ԵՄ-Հայաստան հարաբերություններում ուղղագիծ զարգացման տարի էր, որն առերևույթ զերծ էր խոչընդոտներից և սրընթաց զարգացումներից: Սակայն բանակցությունների ընդհանուր տրամաբանությունը հուշում է, որ կուլիսների հետևում դեռևս բազմաթիվ չպարզված հարցեր կան: Կան նաև պահանջներ, որոնք կատարելու պայմանով միայն ԵՄ-ն Հայաստանին հնարավորություն կընձեռի անցնել քաղաքական, տնտեսական հարաբերությունների իրավական ամրագրման նոր մակարդակի: Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հիմա, ավելի ստույգ՝ առավել ևս հիմա ԵՄ-ն սկսել է ավելի մեծ ուշադրություն դարձնել քաղաքացիական հասարակության զարգացմանը, կրթական և հասարակական մի շարք ծրագրերի: Եվ պատահական չէ, որ ինչպես ոչ կառավարական կազմակերպությունների, այնպես էլ կառավարության համար ԵՄ-ն և եվրոպական երկրները օժանդակություն հատկացնող հիմնական դոնորներն են: Իհարկե, կառավարությանը հատկացվող դրամաշնորհները 2016-ի համեմատ որոշակի անկում են ապրել, սակայն ժողովրդավարական խորհրդարանական

ընտրություններ անցկացնելու պարագայում հաջորդ տարի կարելի է օժանդակության միանգամայն բարձր արդյունքներ ակնկալել:

Թուրքիայի արտաքին քաղաքականության ամփոփում



Հայկ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Թուրքագետ
Երևան

Թուրքիան 2016 թվական թևակոխեց մի շարք երկրների հետ զգալի խնդիրներով, ինչը նեղացրեց արտաքին-քաղաքական ոլորտում նրա մանևրելու հնարավորությունները: Դա Թուրքիային հարկադրեց ժամանակավորապես վերադառնալ «զրո խնդիր հարևանների» հետ քաղաքականությանը, որը զգալի հաջողություններ էր գրանցել 2009թ., և որի ճարտարապետ, Թուրքիայի արտգործնախարար Աhմեթ Դավութօղլուն ամերիկյան Foreign Policy պարբերականի կողմից ճանաչվել էր տարվա լավագույն դիվանագետներից մեկը, «Նոր Քիսինջեր»: Դավութօղլուին են պատկանում հետևյալ խոսքերը. *«Երբ մենք հասնենք մեր հարևանների հետ զրո խնդիր մակարդակի, այդ ժամանակ արտաքին քաղաքականություն վարելու առումով կստանանք վերին աստիճանի լայն մանևրելու դաշտ»*: Թուրքիան «զրո խնդիր հարևանների» հետ քաղաքականությամբ ստացավ այդ դաշտը և անցում կատարեց նեոօսմանիզմի քաղաքականությանը:

2016թ. Թուրքիան կարողացավ սկիզբ դնել Ռուսաստանի, Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորմանը, հայտարարեց, որ Սիրիայի նախագահ Բաշար Ասադը կարող է անցումային ժամանակաշրջանում զրուցակից դառնալ, մի շարք հայտարարություններ արեց Եգիպտոսի ու Իրաքի հետ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության մասին: Սակայն հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման փորձը (ՌՀՓ) զգալի շտկումներ մտցրեց. Թուրքիայի իշխանությունները սկսեցին հայտարարել, որ դրա շնորհիվ պարզվեց, թե ովքեր են երկրի իսկական բարեկամները՝ ՌՀՓ-ի ժամանակ և ոչ թե դրա ավարտից հետո աջակցություն հայտնողները (Ռուսաստան, Իրան): Ուշագրավ են ադրբեջանցի ընդդիմադիր կուսակցապետ Ալի Քերիմլիի այն խոսքերը, որ Ադրբեջանի իշխանությունները սպասել են ՌՀՓ-ի ավարտին և միայն դրանից հետո են աջակցություն հայտնել: Պատահական չէր, որ ՌՀՓ-ից հետո Ադրբեջանում վերսկսվեցին գյուլենականների զանգվածային ձերբակալություններ, որով Ադրբեջանը ձգտում էր ի ցույց դնել իր հավատարմությունը Թուրքիային: Կարելի է ասել, որ ՌՀՓ-ից հետո Թուրքիան անցում կատարեց դրվագային, իրավիճակային արտաքին քաղաքականություն վարելուն՝ չունենալով մշակված ռազմավարություն:

Ռուսաստան: 2016թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտան Թուրքիայի հանդեպ Ռուսաստանի տնտեսական ու վիզային սահմանափակումները. արգելվեցին թուրքական գրեթե ողջ գյուղմթերքի մատակարարումները Ռուսաստան: Դրանից առաջ արգելվել էր Ռուսաստանից Թուրքիա զբոսաշրջային ուղեգրերի վաճառքը (ռուսաստանցի զբոսաշրջիկները Թուրքիայում թվով երկրորդն են՝ 3-4 մլն): Այդ ամենը մեծ վնաս հասցրեց Թուրքիայի հարյուր հազարավոր քաղաքացիների (թուրքական արտահանումը Ռուսաստան նվազեց 66%-ով, Անթալիայում ռուսաստանցի զբոսաշրջիկների թիվը նվազեց 96%-ով), որը միտված էր նրանց շրջանում դժգոհություն հարուցելուն, իշխանությունների հանդեպ ճնշում գործադրելուն, ինչը պետք է նրանց մղեր Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը: Ռուսաստանը նաև ձգձգեց Թուրքիայի առաջին՝ Աքքույուի ԱԷԿ-ի կառուցումը: Այդ ամենը զգալիորեն իր կնիքը թողեց Ռուսաստանի հետ հարաբերությունների հետագա կարգավորման հարցում:

Կարևոր դեր խաղացին նաև քաղաքական տարաձայնությունները: Ռուսաստանը հանդես եկավ «հայկական» մի շարք բլեֆային նախաձեռնությունների հավանականության մասին հայտարարություններով. Հայոց ցեղասպանության հերքման քրեականացում, 1921թ. Մոսկվայի պայմանագրի չեղյալ հայտարարում, սկսեց դատապարտել ապրիլյան պատերազմի ժամանակ ԼՂ խնդրի վերաբերյալ Թուրքիայի հայտարարությունները: Կարելի է կարծել, որ Թուրքիան, ԼՂ հակամարտության գոտում իրավիճակի թեժացման հարցում աջակցելով Ադրբեջանին, մտադիր էր առավելագույնս վարկաբեկել ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրներին, ի ցույց դնել նրանց անզորությունը և այդպիսով նախադրյալներ ստեղծել Ղարաբաղյան բանակցային գործընթացում իր ակտիվ ներգրավվածության համար: Թուրքիան ցանկանում էր, որ Ռուսաստանը սկսի Հարավային Կովկասում լրջորեն հաշվի նստել իր հետ, զգա իր հետ երկխոսելու, համագործակցելու կարիք:

Ռուսաստանը նաև խստապես դատապարտեց Թուրքիայում քրդերի դեմ ռազմական գործողությունները, ընդդիմադիր ԶԼՄ-ների, մարդու իրավունքների ճնշումները, Սիրիայում ու Իրաքում այդ երկրի գործողությունները: Սակայն գլխավոր գործոնը, որը Թուրքիայի իշխանություններին մղեց հենց այդ փուլում գնալ հարաբերությունների կարգավորման, Սիրիայի քրդերի գործոնն էր: Վերջիններս հատել էին Եփրատի արևմտյան ափը՝ Թուրքիայի սահմանած «կարմիր գիծը», սկսել էին ԻՊ-ից ազատագրել Ազեզ-Ջերաբլուս գոտին, որով կմիավորվեին նրանց երեք շրջանները՝ Ջիզրե, Քոբանի, Աֆրին, թուրք-սիրիական սահմանի 700 կմ-անոց (911 կմ-ից) հատվածը կհայտնվեր նրանց ձեռքում, և Թուրքիան կզրկվեր ԻՊ-ի դեմ պայքարի պատրվակով Սիրիա ներխուժում ձեռնարկելու հնարավորությունից: Թուրքիան մտավախություն ուներ, որ Սիրիայի քրդերը կշարունակեին իրենց հաղթարշավը դեպի Միջերկրական ծով: Այդ հանգամանքը վճռորոշ դեր խաղաց, քանի որ «Սու-24»-ի միջադեպից հետո թուրքական ավիացիան դադարեցրել էր իր թռիչքները Սիրիայում՝ կապված այնտեղ ռուսական S-400 համակարգի տեղակայման հետ: Թուրքիային մտահոգում էր նաև Ռուսաստանի նախաձեռնած Կասպից ծով-Պարսից ծոց ջրանցքի կառուցումը, որը մեծապես կվնասեր Ստամբուլի ջրանցքի նախագծին:

Հունիսին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը մասնակի ներողություն խնդրեց Ռուսաստանից (ավելի շատ ռուս օդաչուի զոհվելու և ոչ թե «Սու-24»-ը խոցելու համար), չխոստացավ փոխհատուցում վճարել «Սու-24»-ի համար և պատժել մեղավորներին: Դա բավարար եղավ, որպեսզի Ռուսաստանը սկսի Թուրքիայի հանդեպ սահմանած պատժամիջոցների վերացման գործընթացը: Ռուսաստանը ձգտում էր շուտափույթ կարգավորել Թուրքիայի հետ հարաբերությունները, որպեսզի արագորեն իրագործի «Թուրքական հոսք» գազատարի կառուցումը, նվազեցնի Արևմուտքից իր մեկուսացումը, ինչպես նաև սին հույսեր էր փայփայում ՆԱՏՕ-ից Թուրքիան կտրելու մասին: Թուրքիան էլ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ փորձում էր Արևմուտքին ի ցույց դնել իր «այլընտրանք ունենալը»: Թուրքիան անմիջապես օգտվեց Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորումից և օգոստոսի 24-ին (Սիրիայի նվաճմանը նպաստած 1516թ. Մերջիդաբըքի ճակատամարտից ուղիղ 500 տարի անց) ներխուժեց Սիրիա՝ սկսելով «Եփրատի վահան» գործողությունը: Այդպիսով, թուրքական ավիացիան մոտ իննամյա ընդմիջումից հետո վերադարձավ Սիրիա: Փաստորեն Ռուսաստանը զոհաբերեց Սիրիայի քրդերին՝ Թուրքիային թույլ տալով անվտանգության գոտու ստեղծմամբ սեպ խրել նրանց ինքնավար շրջանների միջև: Սակայն Սիրիայի հյուսիսում Թուրքիայի առաջխաղացումը և այդ կապակցությամբ Ռուսաստանի մտահոգություն հայտնելը վկայում են, որ Թուրքիան իր նպատակների հարցում խաբել է Ռուսաստանին: Դա հաստատում են Էրդողանի այն խոսքերը, որ թուրքական բանակը Սիրիա է մտել Ասադի վարչակարգը տապալելու համար:

ԱՄՆ: 2016թ. թուրք-ամերիկյան հարաբերություններում էլ ավելի մեծ լարվածություն գրանցվեց՝ կապված երկու գործոնի հետ: Դրանցից մեկն ԱՄՆ-ում բնակվող իսլամական քարոզիչ Ֆեթհուլահ Գյուլենի արտահանձնման հարցն էր, որն էլ ավելի սրվեց ՌՀՓ-ից հետո: Թուրքիան Գյուլենի արտահանձնումը պահանջել էր դեռևս 2013թ. դեկտեմբերի 17-25-ին «Մեծ կաշառք» գործից հետո, և քանի որ Գյուլենը վերածվել էր երկրի ներսում Էրդողանի թիվ մեկ թշնամու, ուստի նպատակահարմար համարվեց ՌՀՓ-ի կազմակերպիչ հայտարարել Գյուլենին: Թուրքիայում կասկածներ կան, որ ՌՀՓ-ը կազմակերպել է ԱՄՆ-ը՝ կանխելու համար նրա հետագա իսլամականացումը: Երկրորդ կարևոր խնդիրը կապված էր ԱՄՆ-ի աջակցությունը վայելող Սիրիայի քրդերի «Դեմոկրատական միություն» կուսակցության (PYD) հետ, որին Թուրքիան որակում է որպես «ահաբեկչական կազմակերպություն, PKK-ի սիրիական թև»: Այդպիսով, ԻՊ-ին մեծապես աջակցած Թուրքիան ԱՄՆ-ին մեղադրում էր «ահաբեկչությանը սատարելու» մեջ, վերջնագրի լեզվով պահանջում էր ընտրություն կատարել իր և «ահաբեկիչների» միջև: 2016թ. ԱՄՆ-ը քանիցս դատապարտեց Թուրքիայում մարդու իրավունքների ոտնահարումները, քրդերի դեմ ռազմական գործողությունները:

ԵՄ: ԵՄ-ի հետ հարաբերություններն աչքի ընկան մեծ լարվածությամբ՝ չնայած մարտին կողմերի միջև միգրացիոն գործարքի ստորագրմանը: Թուրքիան շարունակ պահանջում էր, որ ԵՄ-ն շուտափույթ հատկացնի խոստացած 3 մլրդ եվրոն՝ առանց իր կողմից ծախսերի հստակ ծրագրեր ներկայացնելու, սպառնում էր, որ կբացի իր դռները և փախստականների հոսքը կուղղի ԵՄ: Խնդիրներ ծագեցին ԵՄ-ի կողմից վիզային ռեժիմի վերացման հարցում, քանի որ Թուրքիան համառորեն հրաժարվում էր բարեփոխել հակաահաբեկչական օրենսդրությունը: Բնականաբար, Էրդողանը

քաջ գիտակցում էր, որ երկրի ներսում իր բռնությունները բացառում են մոտ ապագայում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը և նրա համար ավելի կարևոր էր երկրի ներսում իր դիրքերն ամրապնդելը՝ այլախոհների դեմ պայքարի տեսքով: Թուրքիան դժգոհ էր, որ ՌՀՓ-ից և ահաբեկչություններից հետո անհրաժեշտ աջակցություն չի ստանում Արևմուտքից: Նոյեմբերին Եվրոպական խորհրդարանը բանաձև ընդունեց՝ կոչ անելով սառեցնել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացը: Այդ համապատկերում Թուրքիան սկսեց հայտարարել, որ պատրաստ է անդամակցել ՇՀԿ-ին, սակայն վերջինս չի կարող դառնալ ԵՄ-ին այլընտրանք, և Թուրքիան մեծ հաշվով անելիք չունի ՇՀԿ-ում, որի անդամներն են Ռուսաստանն ու Չինաստանը: Մինչդեռ ԵՄ-ին անդամակցելու դեպքում Թուրքիան կդառնա տարածքային առումով ԵՄ-ի թիվ 1, բնակչության առումով՝ թիվ 2 երկիրը (Գերմանիայից հետո, որին նա կարող է գերազանցել մոտ ապագայում), մեծապես ներկայացված լինել Եվրոպական խորհրդարանում և մեծ ազդեցություն ունենալ ԵՄ-ի որոշումների վրա:

Իրան, Իսրայել: 2016թ. սկզբին Թուրքիան որոշել էր Իրանի տարածաշրջանային ազդեցության դեմ պայքարել Սաուդյան Արաբիայի օգնությամբ՝ հաջողության չհասնելով միայնակ: Սակայն ՌՀՓ-ից հետո որոշակի ջերմացում գրանցվեց Իրանի հետ հարաբերություններում՝ կապված ժամանակին նրա աջակցության հետ: Դա դրսևորվեց նաև Իրանի ու Ռուսաստանի հետ եռակողմ ձևաչափ ստեղծելու նախաձեռնությամբ, քրդական հոծ բնակչությամբ, Սիրիայի քրդերի հզորացումը չցանկացող Իրանի կողմից «Եփրատի վահան» գործողության առջև «կանաչ լույս» վառելով: Ամեն դեպքում, Իրանն ու Թուրքիան մնում են կատաղի մրցակիցներ՝ տարածաշրջանում ու իսլամական աշխարհում գերակայության հասնելու հարցում:

Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորման մասին պայմանագիրը ստորագրվեց 6 տարից անց՝ համընկնելով Էրդողանի ներողության հետ: Դա պատահական չէր. Էրդողանը ցանկացել է այդպիսով հավասարակշռել Ռուսաստանից կրած «պարտությունը» և Իսրայելի հանդեպ «հաղթանակը», ինչպես նաև շեղել Թուրքիայի քաղաքացիների ուշադրությունն օտար երկրից իր առաջին ներողությունից (Թուրքիան ժամանակին պարծենում էր, որ առաջին երկիրն է, որից Իսրայելը ներողություն է խնդրել): Իսրայելը մտադիր է իր գազը Թուրքիայի տարածքով արտահանել Եվրոպա, քանի որ տարածաշրջանում իր գլխավոր գնորդ Եգիպտոսը Միջերկրական ծովում «Զոհր» խոշորագույն գազահանքի հայտնաբերումից հետո հրաժարվել էր իսրայելական գազ գնելուց: Թուրքիան էլ ցանկանում էր էժան գազ ստանալ Իսրայելից, նվազեցնել ռուսական գազից իր կախվածությունը, մեծացնել իր տարանցիկ դերը: Ամեն դեպքում, Իսրայելը չկատարեց Թուրքիայի երրորդ նախապայմանը՝ Գազայի հատվածի շրջափակման վերացումը, քանի որ դա վերաբերում էր նրա ազգային անվտանգությանը, և նա չէր կարող չիմանալ, թե ինչ բեռներ են ուղարկվում Գազա: Չհաղորդվեց նաև, թե ինչ կարգավիճակ է ունենալու Իսրայելի կողմից 20 մլն դոլարի փոխհատուցում վճարելը. Թուրքիան պահանջում էր դա որակել որպես հակաիրավական հանցանքի համար փոխհատուցում, իսկ Իսրայելը՝ գթասրտության ակտ:


Ադրբեջան-Վրաստան: 2016թ. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Ստամբուլում հայտարարեց, որ Ադրբեջանը Թուրքիայի տնտեսությունում ներդրել է 20 մլրդ դոլար,

իսկ SOCAR-ի նախագահ Ռովնագ Աբդուլաևը հայտարարեց, որ մինչև 2023թ. Թուրքիայի էներգետիկ ոլորտում ներդրվելու է 100 մլրդ դոլար, և SOCAR-ը 18 մլրդ դոլարով կապահովի դրա մոտ 20%-ը: Այդ ներդրումները Թուրքիային մեծ կախվածության մեջ են դնում Ադրբեջանից, և նա չի ցանկանում կասկածի տակ դնել դա՝ գնալով Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման: Թուրքիայի համար մեծ կարևորություն ունեն նաև Ադրբեջանի հետ էներգետիկ-տրանսպորտային համատեղ նախագծերը՝ «Անդրանատոլիական» գազատար (TANAP), «Բաքու-Թբիլիսի-Կարս» (ԲԹԿ) երկաթուղի: ԲԹԿ-ն շահագործման է հանձնվելու 2017թ. սկզբին, իսկ TANAP-ով Թուրքիան 2018թ-ից Ադրբեջանից կստանա հավելյալ 6 մլրդ մ³ գազ, որով Ադրբեջանը կդառնա Թուրքիայի թիվ 2 գազամատակարարը՝ գերազանցելով Իրանը:

2016 թվականին ակնառու էր Թուրքիայի «ռազմակայանային» ակտիվ քաղաքականությունը, որը նեոօսմանյան քաղաքականության բաղկացուցիչ է: Թուրքիան ռազմական ներկայություն է հաստատել Սիրիայում ու Իրաքում՝ օգտվելով նրանից, որ Սիրիայի իշխանությունները միայն աննշան են վերահսկում, իսկ Իրաքի իշխանությունները ընդհանրապես չեն վերահսկում Թուրքիայի հետ սահմանը: 2016թ. Թուրքիան իր առաջին ռազմակայանը բացեց Աֆրիկայում (Սոմալիում)՝ հաշվի առնելով, որ այնտեղով է անցնում աշխարհի ամենակարևոր ջրուղիներից Բաբ էլ Մանդեբի նեղուցը, որով օրական անցնում է 3.5-4 մլն բարել նավթ՝ մերձավորարևելյան նավթի 30%-ը: Թուրքիան նաև հնարավորություն կստանա վերահսկել աֆրիկյան կարևոր երկրներ Եթովպիա և Քենիա տանող հաղորդակցության ուղիները: Սոմալիի դիրքի կարևորությամբ էր պայմանավորված 2011թ. Էրդողանի առաջին այցը, որով նա դարձավ վերջին 20 տարում Սոմալի այցելած օտար պետության առաջին ղեկավար:

Թուրքիան շուտով ավելի խոշոր ռազմակայան կբացի Կատարում, որի մասին համաձայնագիրը ստորագրվեց 2016թ. ապրիլի 28-ին, ինչը գրեթե լիովին համընկավ Կուտ էլ Ամարայի ճակատամարտում բրիտանացիների դեմ օսմանյան զորքերի հաղթանակի 100-ամյակին (29.04.1916): Բացի այդ, նախորդ տարի անցկացվեցին համատեղ վարժանքներ, որով թուրք զինվորն ուղիղ 100 տարի անց վերադարձավ Կատար: Թուրքիայի վեցերորդ գազամատակարար դարձած Կատարը բնական գազի պաշարներով աշխարհում 3-րդն է, իսկ հեղուկացված գազի արտահանմամբ՝ առաջինը: Թուրքիան, այսպիսով, կդառնա Պարսից ծոցի տարածաշրջանի անվտանգության համակարգի մեխանիզմներն անմիջականորեն կարգավորող երկրներից մեկի: Կատարը Թուրքիայի համար կարևորություն ունի նաև Իրանի տարածաշրջանային նկրտումները զսպելու հարցում: Կատարի ռազմակայանը կդառնա Թուրքիայի համար առաջինը Մերձավոր Արևելքում:

Ինքնության ճգնաժամը Թուրքիայում ու դրա հետևանքները քրդական գործոնի համապատկերում



Հովիկ ԱՎԱՆԵՍՈՎ
«Մեսրոպ Մաշտոց» համալսարանի
պատմության ամբիոնի դասախոս
Ստեփանակերտ

*«Եթե մի օր Թուրքիան քանդվի,
ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով,
այլ՝ ինքնության խնդրի...»*
Հրանտ Դինք

